

# ԱՒԵՏԱՐԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

The Weekly **AVEDAPER**, American Bible House, Constantinople.

ՀԱՏՈՐ ԿԵ

Կ. ՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 17, 1912

ԹԻՒ 7

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀՈՐԻՋՈՆԸ. Իտալեւծուրք պատերազմը, Օրէնագէտներու բողոք մը, Անգղիոյ Յիշատակագիրը եւ Սուլթանը, Չինական գործեր:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Աշխարհի քաղաքական կացութիւնը. Ասիա:

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ. Անյարմար ու սխալ վայրի մէջ, Լաւատեսութեան պէտքը:

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ. Երկրիս տեւականութիւնը, Ծիածան (Ոտանաւոր), Քու մեղքերդ քեզի ներուած են:

ՅՕԻՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱԺԻՆ. Քալիֆորնիա կը հրաւիրէ զաշխարհ Փանամա-Խաղաղականի Միջազգային Արուեստահանդէսին 1915ին, Կրօնք եւ գիտութիւն, Ընկերային կեանք եւ Քրիստոնէութիւն, Ուսուցչի կեանքէս, Սուլթանին համար նաւատորմիդ մը շինել, Հայ կեանքը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ՀՈՐԻԶՈՆԸ

**Ի ՏԱԼԵԻԹՈՒՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ** Ֆրանսական կառավարութիւնը Կ. պոլսոյ և Ատէնի Ծոցին Ֆրանսական ածխակայան Օպոքի իր ներկայացուցիչներուն հրահանգ տուաւ որ տեղեկութիւն հաղորդեն Հոտէյտայի և Կարմիր Ծովու Արաբական եզրը գտնուող Բաս էլ Բէթիպի Իտալական ծանուցեալ ոմբակոծման վրայ: Ֆրանսայի գործին կը շահագրգռուի, վասն զի Ֆրանքեթութեւք ընկերութիւնը, որ Ա միլիոն Անգլ. ոսկիի Ֆրանսական փոխառութեան մը օգնութեամբ սկըսած է Հոտէյտա-Սանայի երկաթուղին շինել, գործարաններ և մթերանոցներ կառուցած է Հոտէյտայի մէջ և նաւամատոյց մը ի Բաս էլ Բէթիպի: Եւ յետ 27ին Կարմիր Ծովու պաշարման Իտալական նաւախմբին հրամանատարը ընկերութեան գործակալներուն հրամայած է հինգ օրէն պարպել այդ հաստատութիւնները, վասն զի պայմանաժամը լրանալուն պիտի ուղարկուէր վայրը: Այդ հրամանը տրուած է Լահէի 1907ի իններորդ դաշնագրին երկրորդ յօդուածին համաձայն, որ ոմբակոծութենէ զերծ կացուցուած անպաշտպան տեղերու ցանկին բացառութիւն կ'ընէ բոլոր այն հաստատութիւնները որ թշնամիի մը նաւային կամ զինուորական ոյժերուն կողմէ յօգուտ գործածուելու ընդունակութիւն ունին: Ինչպէս կը բացատրէ ժառանգ Մեյա, Իտալացիները Հոտէյտայի գործարանները այդ դասակարգէն համարած և բանաւոր պայմանաժամ մը տալէ ետեւ ոմբակոծած են վայրը: Տեյա կ'ըսէ. «Հետեւաբար Ֆրանսա, ի բացակայութեան մանրամասն տեղեկութեան, առայժմ պատճառ մը չունի, մինչև որ հակառակը չապացուցուի, Իտալական կառավարութեան բողոքելու՝ այնպիսի արարքներու դէմ որ պատերազմական օրէնքներու համաձայն կ'երեւին: Կորուստ ու վնաս կրողները մանաւանդ անվիճելի իրաւունք ունին միւս պատերազմիկ պետութեան (Թուրքիոյ) դէմ դատ բանալու: Անխօսեմութիւն ու մեծ սխալ պիտի ըլլար այս գործին պատճառով Ֆրանսայի հանրային կարծիքը զրգռել մեր գրացիներուն դէմ:»

Այս ազդարարութիւնը ուղղուեցաւ կարգ մը Ֆրանսական թերթերու որոնք կը պահանջին Կարմիր Ծով Ֆրանսական մարտանաւեր զրկել սա պատրուակով թէ Ֆրանսական շահերը վտանգի ենթարկուած են: Տեյա կը հաստատէ թէ Ֆրանսական շահերը ոչ միայն վնասուած չեն ուղղակի կերպով, այլև կը յարէ թէ պատճառ ունի կարծելու որ ոմբակոծումէն գոյացած վնասը շատ հեռի է հարիւր հազարաւոր ոսկիի գումարէն որու կը

հասցնեն զայն ուրիշ թերթերու: Ենթադրութիւնները, Կ'ըսուի նաև թէ Բաս էլ Բէթիպի քարափին շինութեան առաջը Սուէզէ Հոտէյտա ուղեւորող շոգենաւի մը մէջ է դեռ: Գլխաւոր վնասուողն է իրապէս Օսմ. կառավարութիւնը, որ Սանայի երկաթուղին Եմէնի պաշտպանութեան համար կարեւոր օժանդակ մը կը համարէր: Ֆրանսական կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ ընկերութեան Ֆրանսայի 40 գործաւորները Մէսսաթըրի ընկերութեան Կարմիր Ծովէն անցնող առաջին շոգենաւը դնելու համար: Գալով Կարմիր Ծովու Արաբական հարաւային ծայրը գտնուող Շէյխ Սաիտի կրկին ոմբակոծման, կ'երեւի թէ այդ տեղւոյն վրայ Ֆրանսացիներու հողային կարծեցեալ իրաւունքները գործադրուած չեն: Եթէ պէտք է Ֆիլիպի մէկ յօդուածին հաւատ ընծայել, ապարդիւն մնացած է Երեսփ. Ժողովին 1896ի պաշտօնական սա յայտարարութիւնը թէ Շէյխ Սաիտ Ֆրանսական ստացուած է, և ծովեզերեայ քաղաքը, որ Փէրիմի հանդիպակաց իր դիրքով առեւտրական ու ռազմագիտական կարեւորութիւն ունի, Թուրքիոյ զինուորական իշխանութիւններուն ձեռքը կը մնայ թայնս:

**ՕՐԷՆՍԳԷՏՆԵՐՈՒ ԲՈՂՈՔ ՄԸ** Խաղաղասէրներու Ընկերակցութեան հովանաւորութեամբ առաջնակարգ 124 օրէնսօգէտներ ու հրապարակագիրներ զուտ իրաւաբանական և օրինական տեսակէտներով բողոքազիր մը ստորագրած են Տրիպոլի Իտալական գրաւման դէմ, զոր ազգերու փոխադարձ բարեք յարաբերութիւններուն հետ անհաշտ և վէճերու խաղաղական լուծման վերաբերեալ զաշնագիրները և բարերար կարգադրութիւններու յառաջդիմութիւնը վարկաբեկելու նպատակով կը համարին: Բողոքագիրը մեծապէս կը գնահատէ Իտալացիներուն մեծ աշխատութիւնը Միջազգային Օրէնքի համար, և կը ցաւի որ Իտալական կառավարութիւնը իր վերջին արարքով հակադրուեց այդ աշխատութիւնը: Ստորագրողներուն մէջ կը զըտնուին Էյվալըրի, Բըրթնի և և Ուիլիամս լորտերը, Սըր Ճոն Մաքսոնէլ, Սըր Ճ. Կորսթ, Փրոֆ. Ուէսթլէյք և Փրոֆ. Կուտի, Միջազգային Օրէնքի Կաճառին Աւստրիացի, Հոլանտացի, Ֆրանսացի, Գերման և Սպանիացի ութ անդամներ, տասը դատաւորներ արդի կամ նախկին (չորսը Միաց. Նահանգներէն), Միջազգային Օրէնքի 38 դասախօսներ և 61 ուրիշ ներկայացուցիչներ քաղաքականութեան ամէն կարծիքի և դպրոցի և Եւրոպական գրեթէ ամէն երկիրներու, ինչպէս և Եզիպ-

տութի, Միաց. Նահանգներու, Քանադայի և Աւստրալիոյ Թայմս

**Ա Ն Գ Դ. ՅԻՇՕՏԱԱԿԱԳԻՐԸ** Մեծ Բրիտանիոյ հան-  
**ԵՒ ՍՈՒԼԹԱՆԸ.** րային կեանքին լա-  
 գում կողմերը ներկա-  
 յացնող երեւելի անձնաւորութիւններ Թուրքիոյ  
 ներկայ վիճակին վրայ յիշատակագիր մը մատու-  
 ցին Սուլթանին և Օսմ. Խորհրդարանի երկու ժո-  
 ղովներու նախագահներուն: Օսմ. ժողովուրդնե-  
 րուն հանդէպ համակրութիւն յայտնելէ և թուելէ  
 ետեւ այն կասկածներն ու յուսախարութիւնները  
 որ Օսմ. պետութեան ու արտասահմանի մէջ յա-  
 ռաջ եկան իբր Յ տարի առաջուան յեղափոխու-  
 թեամբ հռչակուած պատուական գաղափարականին  
 չյարգուելուն պատճառով, յիշատակագիրը կը շա-  
 րունակէ. Օսմ. պետութեան հանդէպ Անգլիացի-  
 ներու անցեալ պատմական համակրանքը պղծե-  
 ցաւ այսպիսի չարիքներու պատճառով, և Անգ-  
 ղիացի ժողովուրդը համոզում զոյացուց թէ Թուր-  
 քիոյ հպատակ ժողովուրդներու վիճակը բարւո-  
 քելու յոյս չկայ բնաւ ուրիշ կերպով, բայց եթէ  
 Օսմ. պետութեան աստիճանական բաժանմամբ,  
 Այդ շարիքներուն կրկնուով, եթէ չկասի, միւս  
 անգամ և կը վախնանք թէ անդարձ կերպով, պի-  
 տի պղծեցնէ այն համակրանքը զոր Թուրք յեղա-  
 փոխութիւնը զարթոցած էր մեր մէջ: . . . Մենք  
 մեր արդարութեան վրայ համարում ունեցողի ո-  
 գիով չենք խօսիր: Յուսացած էինք թէ Թուրքիոյ  
 մեծ օրինակը պիտի ծառայէր ոչ միայն բարւոքել  
 իր իսկ բնակչութեան վիճակը, այլև ամրացնել  
 մեր գաղափարականները: Թուրքիա կրնայ ինք-  
 ղինք ազատել իր ճիգերով և արեւելեան քաղա-  
 քակրթութիւնը իր օրինակով: Դեռ եղական պա-  
 տեհութիւն մը ունի արեւմուտքը համոզելու թէ  
 արեւելեան ժողովուրդները յանիրաւի անընդու-  
 նակ համարուած են սահմանադրական կառավա-  
 րութեան: Յաւով սակայն հարկադրուած ենք խոս-  
 տովանիլ թէ այդ կարծիքը պիտի հաստատուի, ե-  
 թէ Թուրք Սահմանադրականութեան մեծ փորձը  
 անյաջող ելլէ: Թայմս

**ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ** Մանչուներու հրաժարման վերաբեր-  
 եալ բանակցութիւնները նպաստա-  
 ւոր ընթացքի մէջ են: Յուսալի է թէ  
 այս անգամ պիտի չձախողին(\*) մետասաներորդ ժա-  
 մուն: Պայմանները կարգադրուած են Մայր կայս-  
 րուհիին, իշխաններուն, Մանչու ազնուականնե-

(\*) Գիտենք թէ չձախողեցան անոնք և թէ հրա-  
 ժարումը կատարուած իրողութիւն է այժմ:

րուն և Եոռանչիքայի միջեւ, որ կայս. հրովարտա-  
 կով մը հրահանգ ստացած է յեղափոխականներու  
 հետ բանակցիլ անոնց նկատմամբ և հանրապետա-  
 կան հիման վրայ ամէն կուսակցութենէ խառն կա-  
 ռավարութիւն մը կաղմելու համար համաձայնու-  
 թիւն կնքել: Ա.ժոյս սկիզբները անդու բանակ-  
 ցութիւն եղաւ երկու կողմերու պատասխանա-  
 տու պատուիրակներուն միջեւ: Եւ Փեքինի մէջ  
 ընդունուած պայմանները կը քննուին հիմա Սըն-  
 եաթսընի և առժամեայ հանրապետական դահլճին  
 կողմէ ի նանքին: Կարեւորութիւն պէտք չէ ընծայել  
 Շանթունկի և Անհուիի նահանգներէն ծանուցուած  
 մանրմունք ընդհարումներուն: Կարելի չէ այլեւս  
 հաւատալ ոեւէ ծանր ճակատամարտի, վասն զի  
 Չինացի Զօր. Ֆէնկ Բուռչանկ, որ Յայթասի իշ-  
 խանին յաջորդեց իրբեւ հրամանատար կայս. պա-  
 հակադօրաց, Մանչու զինուորներն համոզած է  
 ընդունիլ հրաժարման առաջարկուած պայմանները,  
 միեւնոյն ժամանակ կայսերականներու բոլոր ե-  
 րեւելի զօրավարներէն ստորագրուած հեռագիր մը  
 զրկուած է Հանրապետական զօրավարներուն թէ  
 իրենք ամէնն ալ եղբայր են, թէ հանրապետական  
 հիմերու վրայ խաղաղ լուծում մը մօտալուտ է և  
 թէ այլեւս անօգուտ է արիւն թափել: Ամէն նկա-  
 տումներով այլևս հաստատուած է թէ անհրա-  
 ժեշտ է փութով ընակամոն պայմաններ վերահաս-  
 տտել, կարգ կանոն հաստատելու կարող կեդրո-  
 նական կառավարութիւն մը կազմել և երկիրը  
 անտեսական քառսէ մը ազատել: Օտար պահանջ-  
 ներու վճարումը, ի բաց առեալ անոնք որ ծովա-  
 յին մաքսերով երաշխաւորուած են, շատ դժնդակ  
 դործ մը պիտի ըլլայ արդարեւ, և արդէն իսկ մեծ  
 անձկութիւն կը պատճառէ օտար ղեսպանատուն-  
 ներուն:

Սընեաթսըն Թայմսի թղթակցին ըսաւ երկար  
 տեսակցութեան մը պահուն թէ ինք անմիջապէս  
 պիտի հրաժարի, երբ Եոռանչիքայ հանրապետա-  
 կան ըլլայ, և պիտի աշխատի որ վերջինը նախա-  
 դահ ընտրուի նանքինի ժողովին կողմէ: Իսկ Ման-  
 չուներու հրաժարումէն ետեւ կառավարութեան  
 ընթացքին վերաբերեալ հարցման մը պատասխա-  
 նեց թէ ինք կ'առաջարկէ որ ներկայ առժամեայ  
 կառավարութիւնը տարի մը շարունակէ, և յետոյ  
 հրաժարի ի նպաստ ուրիշի մը որ ներկայացուցչա-  
 կան ժողովէ մը անուանուած ըլլայ: Արդի նախա-  
 դահը կ'ըսէ թէ հանրապետական նահանգներու մէջ  
 կարգ կանոն հաստատելու գործը արդէն յառաջ  
 կ'երթայ, Եոռանչու հանդարտ է, նանքին քաղա-  
 քին անդորրութիւնը կատարեալ է, և Յէչուանի

հետ հաղորդակցութիւնները վերահաստատուած են . Առժամեայ կառավարութիւնը կը յուսայ պաշտօնի վրայ պահուիլ Մանչուներու հրաժարումէն ետեւ , բայց պատրաստ է իր իշխանութիւնը Եռանշիքայի փոխանցել հիւսիսային նահանգները կառավարելու համար : Թայժ :

### ԽՄՐԱԳՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՒԻՒՆԸ ,

Ա Ս Ի Ա

Հ . Ս . Պ .

**Վ** ԱՂԵՄԻ Հոռոմայեցի մը կ'ըսէր , «Մարդկային ոչ մէկ բան ինձի օտար կը նկատեմ :» Եթէ ուրիշ աշխարհներ կան իմացական ընակիչներով , անոնք ալ մեզի հետ հասարակաց ունին սա իրողութիւնը թէ իրենք և մենք նոյն Արարչին արարածներն ենք , նոյն տիեզերքին մէջ կը բնակինք , նոյն բարոյական օրէնքին ենթակայ ենք և նախախնամական նոյն հոգածութենէն կախեալ ենք : Եւ եթէ մէկտեղ ժողովուրինք , կարելի է որ համակրութեան ուրիշ շատ կապեր գտնենք : Սակայն , ցորչափ այս կեանքին մէջ մնանք , բան մը չենք կրնար գիտնալ ատոնց վրայ : Լրագիրներ , հանդէսներ , նամակներ և հեռագիրներ մեզի լուր կը բերեն աշխարհի ամէն կողմերէն , բայց ուրիշ ոչ մէկ տեղէ :

Պէտք է որ ամէնս ալ վաղեմի Հոռոմայեցիին պէս զգանք : Անդադար կարեւոր դէպքեր տեղի կ'ունենան մեր աշխարհին մէջ , որ ամենաշահեկան աշխարհ է : Մեր հետզհետէ ծերանալուն համար համակրութիւն չենք փնտոներ , բայց եթէ որ մը մեր ծերութիւնը պատճառ ըլլայ որ չչահագրգռուինք աշխարհի իրադարձութիւններուն , կը յուսանք թէ այն ժամանակ մեր սիրելիները պիտի արգահատին մեր վրայ : Հիմա ամբողջ աշխարհ մեզի մօտ է : Անդդիացի և Աւստրալիացի մրցակիցներու ախոյեաններուն միջեւ Աւստրալիոյ մէջ տեղի ունեցող քրիքէթ գնդախաղերը կարեւոր դէպքեր չեն կըրնար կոչուիլ : Սակայն ամէն օրուան խաղը կը տեղեկագրուի յաջորդ օրուան Լոնտոնեան թերթերուն մէջ :

Արագ ակնարկ մը նետենք ներկայ քաղաքական կացութեան վրայ արեւելեան Ասիայէ սկսելով : Մանչու հարստութիւնը , որ 268 տարի տիրեց Չինու մէջ , արդէն իսկ հրաժարած է կամ պիտի հրաժարի շուտով : Թէեւ շատ անստոյգ է ապագան , յայտնի է թէ Մանչու տիրապետութիւնը վերջացաւ : Եւ ազգերու ընտանիքին այս մեծագոյն ան-

դամը կը պատրաստուի հանրապետութիւն ընդգրկել : Ժողովրդային կառավարութեան յարմարութիւն ցոյց պիտի տա՞յ : Իր նահանգներէն ոմանք միանալով ազգային միութիւնը պիտի պահպանե՞ն թէ մէն մի նահանգ անկախութիւն պիտի հռչակէ : Այս նոյն հարցումն էր որ Ամերիկեան Միութեան նահանգները յուզեց 130 տարի առաջ և որու լուծումը ժամանակ մը երկբայելի մնաց : Եւ եթէ քաղաքային պատերազմը Չինու մէջ շարունակէ , օտար միջամտութեան առիթ պիտի տա՞յ : Ճափոն և Եւրոպական տէրութիւնները պիտի ջանա՞ն երկիրն իրենց մէջ բաժնել և կրնա՞ն բաժնել առանց իրարու հետ վէճի բռնուելու : Եւ եթէ , ինչպէս կը յուսանք , Չին միացեալ և անկախ մնայ , ի՞նչ տարբեր իշխանութեան գլուխ պիտի անցնին : Եւրոպայի և Ամերիկայի մէջ դաստիարակուածներ կան , որոնցմէ ոմանք զօրաւոր ու լուսաւորեալ են , ինչպէս Մր . Ուանկ , որ այնքան լաւ տպաւորութիւն թողուց անցեալ գարնան հոս գումարուած ուսանողական համաժողովին մէջ : Ասոնք նշանաւոր տեղ մը պիտի զբաւե՞ն ազգին խորհուրդներուն մէջ : Եւ ի՞նչ պիտի ըլլայ այս մեծ ժողովրդին կրօնական դարգացումը : Իրենց երեւելիներէն ոմանք ըսած են թէ երկիրը նոր կրօնի մը կը կարօտի , մինչեւ իսկ յայտարարած են թէ Քրիստոնէութիւնն է իրենց համար որդեգրելու լաւագոյն կրօնը : Քաղաքականութեան համար որդեգրուած կրօն մը արժէք չունի ինքնին : Բայց եթէ երկիրը բացուի Քրիստոնեայ վարժարաններու և անոնցմով տրուող իմացական ու բարոյական կրթութեան առջեւ , արդի ժամանակներու ամենակարեւոր դէպքերէն մին պիտի ըլլայ այդ՝ Քրիստոնէական տեսակէտով :

Ճիշտ այս միջոցին Ճափոնի քաղաքական կացութեան մէջ բան մը չկայ այնքան խորապէս շահեկան որքան անոր մեծ դրացիին կացութեան մէջ : Ինչպէս անհատի , նոյնպէս և ազգի մը համար , հանդարտ բարգաւաճման և շարունակական բարօրութեան տարիները անոնք են որոնց վրայ պատմելու յուզիչ բան մը չկայ և որոնք սակայն ամէնէն ցանկալի տարիներն են : Ճափոն ծանրազբաղ է Քրիստոնէ վարչութեան և Մանչուրիոյ իր մասնաւոր շահերուն հոգերով , և չկրնար առ այժմ նոր արկածախնդրութիւններու մղուիլ : Այսու ամենայնիւ եթէ Չինու բաժանում տեղի ունենայ , պիտի պնդէ , և իրաւամբ , նշանաւոր դեր մը ունենալ անոր ապագան որոշելու ձեռնարկին մէջ :

Իր 300 միլիոն բնակչով Մեծ Բրիտանիոյ իշխանութեան տակ գտնուող Հնդկաստանի անհան-

դարտութիւնը վերջերս անձկութիւն պատճառեց Բրիտանական կառավարութեան : Թերեւս ոչ մէկ դարման կրնար գտնուիլ աւելի ազդեցիկ քան Անգլիոյ Թագաւորին ու Թագուհիին անցեալ այցելութիւնն հոն : Տէլիի Տուրպարին հաւասարող փառաւոր հանդէս հաւանօրէն տեսնուած չէ արդի ժամանակներու մէջ : Կը մնայ տեսնել թէ այս այցելութիւնը ո՞րքան ազդեցութիւն պիտի ընէ ապագային մէջ : Առաջին ակնարկով անհեթեթ կը թուի որ 40 միլիոննոց ազգ մը 300 միլիոննոցի մը տիրապետէ, և իրօք զուր ջանք պիտի ըլլայ Մեծ Բրիտանիոյ թագաւորութեանէն կառավարուող պետութեան մը համանմանը փնտել հին թէ նոր բովանդակ պատմութեան մէջ : Ժամանակ պիտի գայ երբ Հնդկաստանի Անգղիական իշխանութիւնը պիտի դադրի, բայց տակաւին ինքնավարութեան պատրաստ չէ Հնդկաստան : Մեծ Բրիտանիոյ հեռացումը անխուսափելի առիթ մը պիտի ըլլայ քաղաքային կռիւններու և ամենամանր ազէտ մը : Անտարակոյս ճշմարիտ է թէ Բրիտանական իշխանութիւնը միշտ կատարեալ եղած չէ : Եթէ Անգղիայէ զրկուած բազմաթիւ պաշտօնեաներուն մէջ ոչ ոք գտնուէր իր պաշտօնին անյարմար, գրեթէ հրաշք պիտի ըլլար : Բայց Հնդկաստան Անգղիական ձեռնարկէցութեան կը պարտի իր ոռոգման ընդարձակ գործը և իր երկաթուղիները, Անգղիական արգարադատութեան՝ ամէն ցեղէ մարդոց հանդէպ վարմունքի հաւասարութիւնը և բարբարոսական ու վնասակար բազմաթիւ սովորութիւններու բարձումը, և Անգղիական բարեսիրութեան՝ սովեակներու և բարեսիրական ուրիշ ձեռնարկներու ինպատ տրուած ահագին գումարները :

Աւելի դէպ այս երկիրը հալով՝ Հնդկաստանէ կ'անցնինք Պարսկաստան : Սիդախ մարզարէ մը պիտի ըլլար ան որ համարձակէր այդ դժբախտ երկրին քաղաքական ապագան գուշակել : Անոր սահմանադրական կառավարութեան փորձը նմանցնե՞նք արդեօք այն երիտասարդին փորձին, որ իր հասակէն աւելի խօր ջուրի մէջ կը նետուի առանց լուղալ դիտնալու : Այդ պիտի ըլլայ յոռետեսական գաղափար մը տածել կացութեան վրայ և վճուել թէ խորհրդարանական կառավարութեան փորձը արդէն իսկ ձախողուածի յանգած է : Չենք կարծեր թէ այսքան յառաջ երթալու ենք, բայց կրնանք գոնէ ըսել թէ այդպիսի կառավարութեան մը համար Պարսկաստանի ընդունակութիւնը դեռ պիտի ապացուցուի : Վճիռը կրնայ յետաձգուիլ, քանի որ ապացուցներու կ'ապաստենք դեռ : Բայց եթէ վճիռ մը պիտի տրուի հիմա, աննպատակ պիտի ըլլայ այն :

Այսու ամենայնիւ տղայք, մինչև որ քալել սորվին, շատ անկումներ պիտի ունենան, և մենք կը յուսանք թէ ազգին անցեալ քանի մը ամիսներու բազմաթիւ անկումները ինքնավարութեան արուեստը սորվելու գործին պիտի սատարեն : Վէճի ենթակայ վեհապետութիւնը կայ : Մէկ կողմէ խնամակալութեան արդի կառավարութիւնը կը պնդէ, միւս կողմէ նախորդ Շահ Մէհմէտ Ալի, թէ ինք է օրինաւոր տէրը : Կան նաեւ Ռուսիոյ և Մեծ Բրիտանիոյ Պարսկական մասնաւոր շահերը, առաջինը երկրին հիւսիսային, երկրորդինը հարաւային մասին մէջ : Իւրաքանչիւրը ամենաորոշ կերպով յայտարարած է թէ դիտաւորութիւն չունի Պարսկական անկախութիւնը վերցնելու : Այս հաւաստումները տիեզերական վստահութեան չարժանացան, և Անգղիոյ մէջ անգամ Անգղիացիներու յանձնաժողով մը կայ որ չհաւատար Ռուսիոյ յայտարարութեան անկեղծութեան : Անշուշտ Մեծ Բրիտանիա և Ռուսիա, որոնց միացեալ ստացուածները երկրազնդիս ցամաքին մէկ երրորդէն աւելին կը գրաւեն, իրենց ունեցածով դո՛ւր ըլլալու են : Եւ եթէ իրօք Պարսկաստանի օգնելու փափաքով վառուած են, շատ լաւ կրնան օգնել : Պարսկաստան իր ներկայ ներդրութեան մէջ եթէ իրօք կարենայ հաւատալ այս երկու մեծ զրացիներուն անկեղծ բարեկամութեան, կրնայ անոնց օգնութեամբ դէպ ի խաղաղ ու անքոյթ նաւահանդիստը առաջնորդուիլ փոթորկայոյզ այն ջուրերէն որոնց վրայ կը տատանի այժմ իր պետական նաւը :

Այսպէս Ասիոյ բոլոր այս ազգերը իրենց ներկայ վիճակով մեր հետաքրքրութիւնը կը շարժեն, և բոլոր խելացի մարդիկ կը փափաքին միշտ տեղեակ ըլլալ անոնց մօտ ապագայի մէջ յառաջդիմութեան : Բայց մինչ մարդ կ'ուրախանայ իր զրացիներուն վիճակն իմանալով, ամէնէն աւելի իր տան գործերով կը շահագրգռուի : Քաղաքակիրթ ընդհանուր աշխարհին համար Թուրքիա միւս Ասիական երկիրներէն ետ չմնար շահեկանութեան կողմէ և մեզի համար առաջին տեղը կը գրաւէ : Ներկայս կարեւոր չըջան է Թուրքիոյ պատմութեան մէջ : Իր առաջին խորհրդարանը լուծուեցաւ և շատ բան կախեալ է ընտրելի նոր խորհրդարանէն : Առաջին խորհրդարանին աշխատութեանէն թերեւս չեկաւ ամէն ինչ որ կը յուսացուէր, բայց դարմանալի չէ այդ Օսմ. պետութեան համար նոր փորձ էր այն և մէկէն կարելի չէ կատարելութեան հասնիլ : Բայց առաջին խորհրդարանին Յէ տարիներու փորձառութեանէն ետքը, շատ աւելի բան պիտի ակնկալուի երկրորդէն, և իրա-

ւամբ: Ուրիշ կէտ մը եւս կայ ուր յառաջդիմութիւն կը յուսանք: Նոր բէթիմին հիմը պիտի ըլլար «Ազատութիւն, արդարութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն» նշանաբանը: Պետութեան ինչ ինչ մասերու մէջ այս նշանաբանին սկզբունքները անկատար կերպով կը գործադրուին: Արդարեւ ոմանք յայտարարեցին թէ չեն հաւատար այդ նշանաբանին անկեղծօրէն որդեգրման, Բայց զարմանալի չէ որ շատ տեղ տգէտ ժողովուրդներ կամաց կ'ընդունին նոր գաղափարները: Մ. և Յ. Քոմիթէն և ամէն անոնք որ կը բաղձան անոր նշանաբանով արտայայտուած յառաջդիմութեան՝ դաստիարակչական շատ դործ ունին ի գլուխ հանելու: Այդ նշանաբանն էր որ ուրիշ ազգերու ջերմ համակրանքը չահեցաւ, և այդ համակրանքը անհրաժեշտ է Թուրքիոյ Ազգերու ընտանիքին մէկ անդամն է այն, և ընտանիքի անդամներէն ոչ մին կրնայ մեկուսանալ և միւսներուն կարծիքներուն անտարբեր մնալ: Թուրքիա ճշմարիտ բարեկամներ ունի որ վշտացած ու դայրացած են այն անիրաւութիւններուն համար զոր կրեց ներկայ պատերազմին պատճառով: Այդպիսիներու բարեկամութիւնը Թուրքիա պիտի զօրացնէ այն համեմատութեամբ որով հաւատարմօրէն գործադրէ Օսմ. պետութեան մէջ քաղաքային ազատութեան և համայն ազգայնութիւններու հաւասարութեան իր խոստումը: Պատերազմը մինչեւ ցարդ տնտեսական մեծ կորուստ չպատճառեց պետութեան, և այս մասին Թուրքիա աւելի քիչ վնասուեցաւ քան իր թշնամին: Բարեբախտաբար բոլոր միւս կառավարութիւններուն հետ լաւ յարաբերութեան մէջ կը գտնուի: Կը յուսանք և կը մաղթենք որ պատերազմը շուտ վերջանայ և խաղաղութիւն հաստատուի արդար հիման մը վրայ, նաեւ երբ զարուհի դայ, կռուի դաշտի ընդարձակման մը վկայ չըլլայ, այլ խաղաղութեան երկարատեւ շրջանի մը սկիզբ հանդիսանայ այս երկրին և ամէն երկիրներու համար:

### ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՆՅԱՐՄԱՐ ՈՒ ՍԽԱԼ ՎԱՅՐԻ ՄԷՋ  
 «Ով Եղիա, հոս ի՞նչ բան ունիս» Գ. Թագ. ԺԹ. Ծ.  
 Ա. Բարի մարդ մը՝ ու էր տիեզերքուտը կուռն կրնայ  
 ուրախալ: Եղիա քաջ մարդ մըն էր. առաջին անգամ  
 ան մեզի կը ներկայացուի երբ Իսրայելի չար  
 թագաւորին, Աքաաբի, դիմադրեց ու ըսաւ, «Իսրայելի  
 Տէր Աստուածը, որուն առջեւ կը կայնիմ, կենդանի է  
 որ այս տարիներուն մէջ ցող ու անձրեւ պիտի չըլլայ,  
 բայց եթէ իմ խօսքովս» Կարմեղոսի գլուխը ան  
 մինակը դէմ դրաւ Բահայի

չորս հարիւր յիսուն մարգարէներուն ու զանոնք  
 խոսովութեան ու կործանումի մասնեց, Նորէն ալ  
 այս քաջ մարդը, որ անվեհեր կեցաւ երբ ազգ մը  
 ամբողջ իրեն դէմ էր, հպարտ ու կրքոտ կնոջ մը  
 սպառնալիքներուն առջեւ տեղի տուաւ, փախաւ  
 Յեզաբելի վրէժխնդրութենէն ու չկեցաւ մինչեւ  
 որ հասաւ Բերսաբէէ, որ կը գտնուէր Յուդայի  
 թագաւորութեան սահմաններուն մէջ: Երբ ա՛լ  
 վտանգը անցած էր գնաց դիհիի մը տակ և սըր-  
 տանց մեռնիլ ուղեց: Անկէ ալ ելաւ ու ծայրայեղ  
 վհատութեան մէջ թափառելով Քորեբ հասաւ: Գնդակահար  
 եղջերուի մը պէս մեռնելու տեղ կը փնտռէր: Ա՛լ  
 կեանքէ ձանձրացած՝ մենաւոր քարայր մը  
 առանձնացաւ, ու երբ հոս էր՝ Տէրով խօսքը  
 եկաւ անոր, ըսելով, «Ով Եղիա, հոս ի՞նչ  
 բան ունիս»:

Մենք Եղիան այս վախկոտ կերպին համար չենք  
 արդարացներ, բայց կ'ըսենք թէ այս ըրածը իրեն  
 չէր յարմարեր: Այս շատ տարբեր էր այն առի-  
 ծանման քաջութենէն զոր նախապէս ցուցուցած  
 էր: Անտարակոյս ջղային հակադրեցութեան մը  
 ենթակայ եղած էր Եղիա այս անգամ: Այս դէպ-  
 քին մէջ կը տեսնենք թէ մարդ մը իր գերազանց  
 գտնուած մէկ բանին մէջ իսկ կրնայ տկարանալ:  
 Հեզահամբոյր բնաւորութեան տէր մէկը կրնայ  
 դայրոյթի մը առջեւ տկարանալ, Բարեսէր մարդ  
 մը կրնայ անձնամոլական բան մը ընել: Մարդոց  
 լաւագոյնները իսկ կրնան իյնալ, ամէնէն բարի  
 մարդը համեմատաբար բարի է: Բայց չմոռնանք  
 թէ նկարագիրը միակ գործով մը դատել ուղիղ  
 չըլլար: Կեանքի համագումարին նայելու է: Ամէնէն  
 աղէկ կեանքերու մէջ իսկ թերութիւն կրնայ գըտ-  
 նուիլ: Աշխարհի մէջ կատարեալ կեանք հաստ  
 միայն եղած է:

Այս հարցումին մէջ զարմանք կայ, «Հոս ի՞նչ  
 բան ունիս» Ի՞նչ, Կո՛ւ հո՛ս, քարայրի մէջ առանձնացած:  
 «Մայրի ծառը թող ողբայ, քանզի եղեւինը  
 ինկաւ» Անգամ մը մտածենք այս ցուցուած  
 օրինակին վրայ, եթէ Եղիա չկրցաւ Աստուծոյ  
 պաշտպանութեան վստահիլ, եթէ Աստուծոյ  
 մարգարէն վատ կնոջ մը սպառնալիքներուն  
 դէմ չկրցաւ արիանալ, չէ՞ որ ուրիշներու Աստուծոյ  
 վրայ դրուած վստահութիւնն ալ պիտի խախտի  
 Բ. Յոսափէց մարդ մը՝ ու կրնայ վեհերոհիլ: Իւրաքանչիւր  
 ճշմարիտ ու հաւատարիմ գործիչ կրնան  
 կը խորհի որ զուր տեղ աշխատած է ու ոչինչի համար  
 ուժասպառած: Անոր սիրտը կրնայ թուլնալ  
 ժամանակին շարութեան ու կրօնքի անտեսումին  
 ու օսնակոխուելուն պատճառով: Եղիա ազադա-

կեց, «Իսրայելի որդիները քու ուխտդ թողուցին, քու սեղաններդ փլուցցին և քու մարդարէներդ սուբոզ մեղացցին. ու միայն ես մնացեր եմ, և իմ անձս ալ կը փնտռեն՝ որպէս զի զանիկա վերցնեն»։ Գործերը իսկապէս շատ յուսահատեցուցիչ վիճակի մէջ էին, բայց ոչ այնչափ որչափ կը պատկերացնէր Եղիա։ Տէրը դեռ եօթը հազար հոգիներ պահած էր որոնք Բահաղի առջեւ ծունկ կրկնած չէին։ Ահա այս փրկեալ մնացորդով ազգը պիտի փրկուէր։ Անյաջողութեան պատճառը յաճախ բուրրովին սրտաբեկ ըլլալն է։ Յաճախ փայտերու դէմ զարնուող ու փշրուող ալիքի մը պէս կ'ըլլանք։ Յուսահատութեան դէմ մաքաթիլ պէտք ենք։ Մեր յոյսը պիտի տկարանայ, եթէ մեղմէ, մեր անձէն աւելի վեր չնայինք։

Գ. Հասարակ մարդ մը էր որոնք հոն մտնալս լսել։ Հարցումին մէջ յանդիմանութիւն ալ կայ, «Ինչո՞ւ համար պարտականութեանդ տեղէն հեռացած ես»։ Հիմա երթալու և քարայրի մը մէջ պահուելու ատենը չէ երբ ազգը քեզի կը կարօտի։ «Հո՞նք բան ունիս»։ Այս քեզի յարմար վայրը չէ. պաշտօնիդ, գործիդ դարձիր։

Մենք ալ հոն ենք ուր պէտք է որ գտնուինք։ Մենք ալ կը փախչինք մեր պարտականութիւններէն, երբ պէտք էր որ անոր զուտ մնայինք քաջասրտութեամբ ու ընէինք պէտք եղած զիմադրութիւնը։ Եղիա քարայրին մէջ խեղճ էր. զայն սրտապնդելու ու երջանկացնելու համար Աստուածային տեսիլք չեկաւ։ Ան հոն յանցապարտ խիղճով մը կը նստէր։

Գեղեցիկ աւանդութիւն մը կը պատմուի արեւդայի մը մասին, որ երբ իր խուցին մէջ կ'աղօթէր, փառաւորեալ Տէրը տեսաւ տեսիլքի մէջ, ու մինչ Անոր կը նայէր մեծ հիացումէ յափշտակուած լսեց վանքին զանգակը որ զինքը կը հրաւիրէր երթալու և վանքին դուռը հաւաքուած աղքատները կերակրելու իր գործին։ Վանականը իր խոնարհ պարտականութիւնը կատարելու փութաց ու երբ վերադարձաւ տեսիլքը դեռ անոր կը սպասէր ու ըսաւ, «Եթէ հոս մնայիր, ես պիտի աներեւութանայի»։ Անոնք որ պարտականութեան ձայնին մտիկ կ'ընեն, Աստուածային փառքին այցելութիւնով պիտի ուրախանան, բայց անոնք որ պարտականութենէ կը խուսափին՝ կը մնան մութի մը մէջ զոր իրենց յանցապարտութեան զգայումը կը ստեղծէ։

Քարայրին մէջ Աստուածային յանդիմանութեան ձայնը կը խօսի։ Այն աչքերը, որ փախստականը կարմեղոսէ մինչեւ Քորեթ կը հետապնդեն, կրնան

գտնել թէ ո՛ւր պահուած է ան։ Աստուածային հսկողութենէն ոչ ոք կրնայ խուսափիլ։ Աստուած գիտէ թէ իւրաքանչիւր ոք ի՞նչ կ'ընէ, և թէ ի՞նչ տեսակ կեանք կ'ապրի։ Իւրաքանչիւր մարդէ իր կեանքին հաշիւը կը պահանջէ։ Կ'ուզէ գիտնալ պատճառը թէ ինչո՞ւ կը գտնուինք հոն ուր կը գտնուինք։ Անոնք որոնք իրենց տեղէն, պարտականութեան վայրէն հեռու կը գտնուին, անոնք որոնք յայտնի պարտականութիւն մը կ'անտեսեն՝ քահայցոյց պատճառ մը չեն կրնար ցուցնել։ Աստուածային հարցումը թէ Ո՛ւր ես, զանոնք կը պապանձեցնէ։ Երանի՛ այն մարդուն, զոր Աստուած կը գտնէ այն տեղը ուր պէտք է որ գտնուէր։ Մեծ է այդպիսի մէկուն երջանկութիւնը։

ԼԱԻԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԵՏՔԸ

«Բաները երբեք այնչափ գէշ եղած չեն որչափ հիմա»։ Ահա այս է տրտնջացողներէ ոմանց յանկերզը։

Բայց այս սխալ մըն է, պատրանք մըն է խորհիլը թէ, ինչպէս յաճախ կ'ընենք, իրերը այնչափ գէշ եղած չեն որչափ մեր օրերը։ Ընդհանուր վիճակը ի՞նչ ալ ըլլայ, Սկովտիոյ վիճակը 100 տարի առաջ հիմակուանէն շատ աւելի գէշ էր։ Երբ Տր. Չամբրս Մէյնթ Ճոնի թաղին մէջ, Կլասկո, իր ծանօթ գործը սկսաւ 1819ին — 92 տարիներ առաջ — ան ժողովուրդը վերջին աստիճան տգիտութեան ու անասնական վիճակի մէջ գտաւ։ 800է աւելի ընտանիքներ գտաւ, որոնք եկեղեցիին աղղեցութենէն բոլորովին դուրսը մնացած էին։ Երբ 73 տարի առաջ Նորման Մէլքէօր Լուտուէի երէց հղաւ, սապէս կը գրէր. «Հոն Տէրունական Օրուան սուրբ պահուիլը բնաւ չկար, բազմաթիւ պատանիներ դուրսը դաշտերու մէջ ամէն տեսակ չարութիւններ կ'ընէին ու մարդոց նախատինքներ կ'ընէին Աստուծմէ ու մարդոցմէ առանց վախճալու և ամաչելու։ Մէկ խօսքով արեւցութիւն, հայհոյութիւն, Տէրունական Օրը անպատուելի, սովորական բաներ էին»։ Երբ 74 տարի առաջ Տր. Կութհրի Էտինպուրիի մէջ իր գործին սկսաւ, այսպէս կը նկարագրէ իր առաջին այցելութիւնը. «Դուռէ դուռ թափառող առաջին 150 ընտանիքէն հազիւ հինգը Աստուծոյ տունը, եկեղեցի մը կամ մատուռ մը կը յաճախէին։ Ընտանիքներէ շատեր հինումին հազած էին ու այս բոլոր թշուառութեան պատճառը արեւցութիւնն էր»։

Ահա ասոնք էին այն «հին բարի օրերը», որոնք այնչափ ձերմակ կը ներկուին երեւակայոյ՞ ճարտասաններու կողմէ։ Անոնք իսկապէս հին չար օրեր

էին, և եթէ ներկան անոնց հետ բաղդատենք, կը տեսնենք թէ յոռետեսութեան պատճառ մը չկայ: Բայց ինչ որ ալ ըլլայ՝ բաները հիմա այնպիսի վիճակ մը ունին որ առաջուան չափ գէշ չեն: Մակընթացութենէն ետքը տեղատուութիւնը բնական է: Եւ եթէ այսօր հոգեւոր աշխարհին մէջ տեղատուութիւն իսկ է, նորէն տեղատուութիւնը այնչափ շատ չէ որչափ էր առաջ, ու հաւատքի ականջը կրնայ անգամ մըն ալ լսել մակընթացութեան ալիքներուն խուժումը: Ճամբան որմէ կ'երթայ մարդկութիւնը՝ դէպի մութը շտանիք, այլ յամբարէն դէպի վեր, դէպի լոյս: Միշտ յոռետեսութիւն յանկերգի՝ հաւատարիմները յուսահատեցնել ու սիրտերը տկարացնել է, իսկ յոյսի եղանակը հնչեցնել՝ դէպի յաղթութիւն առաջնորդել է: Ու այսօրը երէկի հետ բաղդատելով Քրիստոսի Եկեղեցին իրաւունք ունի լաւատեսութեան երգը հնչեցնելու:

**ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ**

ԵՐԿՐԻՍ ՏԵՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ՓԵՐՏԷՆԸ ԼՈՒՆԷԼ)

Մէկը այն բազմաթիւ հարցերէն, զորոնք գիտութիւնը կը ներկայացնէ Բնութիւնը ուսումնասիրողներու առջեւ, երկրիս տեւականութեան հարցն է: Այս երկիրը ո՛րչափ ժամանակէ ի վեր գոյութիւն ունեցած է և դեռ ո՛րչափ ժամանակ կրնայ դիմանալ: Այս հարցը, զոր շատ մը տեսակներէ ներկայացնել կարելի է, քանի մը տեսակներով արդէն ծանօթ ալ է. զոր օրինակ, թէ մեր երկիրը անմահ չէ, այլ իր կեանքին համար սահման մը ունի: Ուրեմն այս սահմանները ո՞րք են: Մասնաւոր նշանացիցեր ունինք կէտ նպատակին ցուցնող:

Հարցը նախ ոչ թէ երկրաբանական, այլ աստեղագիտական հարց մըն է, և այս պատճառով աստեղագէտներէ և ոչ թէ երկրաբաններէ սպասելու ենք անոր պատասխանը: Երկրաբանութիւնը թէեւ կը խօսի երկրիս պատմութեան մասին, բայց երկրիս ժայռերուն վրայ գրուած պատմութենէն ալ աւելի առաջները երթալու ենք ադէկ մը հասկնալու համար անոր իսկութիւնը: Մենք կրնանք ծառ մը ադէկ մը ուսումնասիրել տարի մը, բայց մինչեւ որ չիտնանք այն անտառը որուն մաս կը կազմէ մեր ուսումնասիրած ծառը իր փտած բուններով կամ պտղով հունտերով, շատ քիչ գաղափար միայն պիտի կրնանք կազմել թէ ո՛րչափ տարիէ ի վեր ծառը մեծնալու վրայ եղած էր, և թէ ո՛րչափ ժամանակ եւս կրնար մնալ ու դիմանալ:

**ԵՐԵՒՆ ԺԵՂՈՒՄՆԱԿԵՆԸ**

Հասկնալու համար թէ ինչ է մեր ուսումնասիրած ծառին հաւանական ճակատագիրը՝ նախ անոր դուրսի կողմը և եթէ կրնանք նաեւ ներսի կողմը նայելու ենք անոր տարիքը ճշգրտու համար թէեւ քիչ մը տարօրինակ երեւայ՝ ճիշդ նոյն գործողութիւնն է որ կ'ընենք երկրիս վրայ ալ սա բացառութեամբ թէ հոն անցեալին պատմութիւնը ընողը աճուածի շրջանակները չեն, ինչպէս կը տեսնենք ծառին կտրուած բունին վրայ, այլ երկրիս ջերմութիւնը:

Իսկպէս ջերմութիւնը բոլոր խնդրին բանալին է: Հրաբուխները նախնի մարդոց ցուցուցած էին թէ երկրիս մէջը շատ տաք ըլլալ պէտք էր: Մարդիկ վերջը գտան թէ ո՛ւր որ ալ պեղէին՝ գետինը այնչափ կը տաքնար որչափ վար կ'իջնային երկրիս մակերեսոյթէն:

Անգղիոյ մէջ Քորնուոյի ծովեզերքը դէպի ծովին տակը ահագին հանք մը կայ, որ կը կարծուի թէ Հռոմայեցիներու ժամանակէն ի վեր կը բանեցուի: Այս հանքին խորքը իջնող անձ մը իր ձեռքով իսկ կրնայ դգալ ժայռերու տաքութեան փոփոխութիւնը, միեւնոյն ատեն ալ վերը իր զլխուն վրայ կը լսէ Ովկիանոսին որտալը: Ահա այս իրողութիւնը որոշ հասկացողութիւն մը կրնայ տալ ձեզի վիճակին մասին այն երկրին, որուն վրայ կը բնակինք — անոր տաքցած սիրտին և ծովի պաղ ծածկոյթին մասին:

Ջերմութեան այս յաւելումը այնչափ կը կանոնաւորուի որչափ աւելի խորքը իջնանք, մինչև որ իւրաքանչիւր 70 կանգունի համար Սանթիկրատի մէկ աստիճան կ'աւելնայ: Ջերմութեան աստիճանական այս յաւելումը այնչափ շուտ կը բարձրանայ որ համեմատական այն խորութեան մէջ որով կրնանք նարինջին կեղեւը միջուկին հետ բաղդատել, ջերմութիւնը բաւական պիտի ըլլալ մեզի ծանօթ որեւէ տարր կամ նիւթ հալեցնելու: Այս ջերմութիւնը սաստկութեան տեսակէտով պէտք է ա՛լ աւելի բարձրանայ երբ երկրին կեղտոնին մօտենայ, մինչև որ հոն գեհեան մը ըլլայ:

Հետեւաբար հանքերն ու հրաբուխները մեզի միայն երկրիս միջուկին սաստիկ ջերմութիւնը չեն ցուցներ, այլ քանի որ ջերմութիւնը կեղտոնին դէպի մակերեսոյթ կը նուազի, կը ցուցնեն նաեւ թէ ջերմութեան հոսանք մը ըլլալ պէտք է կեղտոնէն դէպի դուրս: Ուրիշ խօսքով, մեր երկիրը կամաց կամաց պաղելու վրայ է: Եւ արդ քանի որ մեր ջերմութիւնը կտրուելու վրայ է, երկիրը աստենօք հիմա եղածէն տաք ըլլալու է: Այս կերպ

պով ինքզինքնիս սա հարցումին հետ դէմ առ դէմ կը գտնենք. Ինչպէս սկսաւ այդ Չերմութիւնը:

Հոս մեր ամենօրեայ փորձառութիւնը բացատրութիւն մը գտնելու շաղկին մէջ կը գնէ մեզ, Երբ մարմին մը միւսին կը զարնուի, երկուքն ալ կը տաքնան: Ամէն մարդ դիտէ թէ սալը մուրճի հարուածներուն տակ կը տաքնայ: Իրապէս ալ այս սկզբունքը տիեզերականապէս այնչափ ճշմարիտ է որ Չերմութեան քանակը կրնայ չափուիլ ընդհարումի ուժէն: Ահա այս կերպով գտնուած է թէ մեր երկրին հիմա ունեցած բոլոր Չերմութիւնը ատեն մը գրուած նիւթի զանգուածներուն իրարու վրայ ինչպէն յառաջ եկած կրնայ ըլլալ:

Այս կրնայ ըլլալ կերպը, որով այս Չերմութիւնը յառաջ եկած է: Որովհետեւ եթէ այս Չերմութիւնը արեւէն յառաջ եկած ըլլար, այսինքն երկիրս տաքցնողը միայն արեւը եղած ըլլար, այն ատեն երկրիս գուրբը, մակերեւոյթը աւելի տաք պիտի ըլլար — մինչդեռ կը տեսնենք թէ այս չէ իրողութիւնը:

Երկրիս ներկայ ներքին Չերմութիւնը այս կերպով կ'իմացնէ մեզի թէ այս մոլորակը միշտ այս մարմինը չէր գոր հիմա գիտենք: Շատ հեռուոր անցեալի մը մէջ ան գրուած նիւթերու զանգուած մըն էր, և այն ատենէն ի վեր ներկայիս խտացած գունտի ձեւը առած է: Այն ատեն անոր ծաւալը շատ աւելի մեծ էր, և Հին Քառասային Աշխարհի առասպելին անմահն վիճակի մը մէջ չէր: Ահա այս կերպով երկրիս ներկայ վիճակը անոր երբեմնի վիճակին պատմութեան մէկ յայտնութիւնն է, և այս խնդրին մէջ մեզի պէտք եղած տեղեկութիւնը հայթայթող անոր Չերմութիւնն է:

Այս նիւթին վրայ ունեցած մեր տեղեկութիւններուն վախճանը չէ այս: Աստեղագիտութիւնը աւելի տեղեկութիւններ կու տայ մեզի այս մասին: Լուսնի մակերեւոյթը՝ երբ հեռագիտակով մը դիտուի՝ խոշոր խառնարաններ կը ցուցնէ, որոնց մէջ կան նաև ուրիշներ որոնք առաջիններուն ձեւանալէն ետքը ձեւացած են: Լուսինը, հետեւաբար, նորէն ու նորէն հրաբխային անարկու գործունէութիւններու թատր հանդիսացած ըլլալ պէտք է, իրբեւ արդիւնք անոր ալ մէջը գտնուած կրակին: Բայց նորէն ալ այսօր լուսնին մակերեւոյթը՝ լուսնային երկար օրուան առիթով արեւին անոր վրայ ցոլացուցած Չերմութիւնը բացառելով՝ բացարձակապէս ցուրտ է:

Այժմ Լուսնիթագ և Երեւակ անուն խոշոր մոլորակներուն մէջ ալ ներքին Չերմութիւն գտնուելուն մասին սպացոյցներ կան: Մթնեմութի-

բական զննութիւններ զայս որոշապէս կը ցուցնեն, թէեւ մենք մեր զգայարաններով չենք կրնար զգալ անոնց Չերմութիւնը: Արեւին Չերմութիւնը տարակոյս չկայ թէ իրապէս կը զգացուի, թէեւ մենք անկէ իննսուներեք միլիոն մղոն հեռու կը գտնուինք:

Բոլոր այս մարմինները իրենց Չերմութիւնը նոյն գործողութիւնով ստացած են, այսինքն ցրուած նիւթերուն հաւաքումովն ու խտացումով: Անոնց նիւթերուն զանգուածը իրենց գոյութեան նախնական շրջանին մէջ համախոնուած ըլլալու է: Անոնք դանդաղ զարգացումով մը ձեւացած չէին, որովհետեւ այդ կերպով ներքին Չերմութիւնը բոլորովին դուրս պիտի ձառագայթէր դեռ հազիւ գոյացած, և այդ մարմինները ներքնապէս պաղ պիտի ըլլային այսօր:

Մենք այս կերպով մոլորակներու պատմութիւնը ղէպ անցեալը կրնանք հետադադար անոնց Չերմութենէն — անցեալ մը որ այնչափ հեռու է որ մինչևեւ իսկ երկրաբանական պատմութիւնը բազմաաբար դեռ երեկուան պատմութիւն մը կրնայ նկատուիլ: Մենք աստեղագիտական ծանօթութիւններով ղէպ ի ետ շատ աւելի հեռուները կրնանք երթալ: Բայց այս առիթով մենք պիտի չուզէինք անցեալը ուսումնասիրել, այլ ապագան:

Մեր երկրին գալով, հիմա անոր աստիճանաբար պողելու շրջանին մէջ ենք: Ինչպէս որ ան իր կեանքի ընթացքին առաջին շրջանին աստիճանաբար Չերմութիւն ստանալու վրայ էր, հիմակ ալ իր ունեցած Չերմութիւնը դուրս տալու շրջանին մէջ է: Մեր երկիրը իր պատմութեան այս շրջանին արդէն մտած է: Հիմա անոր մակերեւոյթը շատ պաղած է, ինչպէս յայտնի է, քան իր երբեմնի մակերեւոյթը, և հիմակուան հարցումը օտ է թէ՛ Դեռ ո՛րչափ ժամանակ կայ անոր մնացեալ Չերմութեան ալ բոլորովին կորսուելուն համար:

Ասոր պատասխանելու առիթով կը դիտենք թէ Չերմութիւն հայթայթող ուրիշ օրեւէ աղբիւր մը չկայ ալ, ինչպէս աստեղագիտական նոյնպէս ուրիշ իրողութիւններ կը ցուցնեն թէ զգալի յաւելում մը եղած չէ երկրիս զանգուածին՝ իր երկրաբանական շրջանին մէջ. ուրիշ պատճառներ ալ մեզի կը ցուցնեն թէ ապագային մէջ ալ կարեւոր յաւելումի մը հաւանականութիւն չկայ: Ասոր պատճառը սա է թէ ստացումի համար բան մը չէ մնացած: Թէեւ նիւթի անհամար մասեր, մէտէորաներ, կոն մեզ շրջապատող անջրպետին մէջ, բայց անոնց ծաւալը այնչափ պղտիկ է որ անոնց բոլորին կուտակումը իսկ անկարեւոր զանգուած մը պիտի

ձեւացնէ: Մենք այս իրողութեան կը հաւատանք, որովհետեւ երկրի վրայ ուրիշ որեւէ տեղէ աղբոջ ձգողական ուժ մը չկայ որ մինչեւ հիմա նկատողութեան առնուած չըլլայ: Եթէ մէտէորաներու ծաւալը այս մասին նկատողութեան առնելու արժանի ըլլար, անոնց ցրուած ըլլալու իրողութիւնը արգելք մը պիտի չըլլար իրենց համար մոլորակներու կարգերը խանդարելու: Բայց այսօրինակ խանդարումի որեւէ նշան մը գոյութիւն չունի:

(Շարունակելի)

ԾԻԱԾԱՆ

Հորիզոնը կեանքիս կապոյտ լուսաշող՝  
 կը մոսայիս մեղքի մագեր մթասքօղ.  
 Փոթորիկը կ'ոռնայ յանկարծ կատաղի  
 Դուրս ժայթքելով անձրեւ, կայծակ ամեհի:

Փոթորկին մէջ, կըրակին մէջ, կարեվէր  
 Սիրտս և հոգիս կը սաւառնին դէպ ի վեր,  
 Ամպերէն վե՛ր, փոթորկէն վե՛ր, շատ հեռո՛ւն,  
 Լոյս-Արեգին ոսկեճաճանչ, շողշողուն:

Ամպ, փոթորիկ, փայլակ, կայծակ կը լսեն.  
 Ամպի տակէն բոցեղ Արեգը նորէն  
 Իր լոյսերով, իր շողերով հըրավառ,  
 կը փողփողի կապոյտին վրայ երկնափառ:

Ամպերու վրայ փոթորկալից և ահեղ  
 կը նշմարուի կամարածեւ մի աղեղ.  
 Մէր-Անհունին խաղաղաւէտ սըրբութեան  
 Ծիածոնը կը ծածանի երփներփեան:

Համազրբոյթ մը կը դառնայ իմ հոգին  
 Ծիածանի, գոյնի, սիրոյ երկնային.  
 Ա՛յ չեն ծածկեր հոգւոյս կապոյտն անսահման  
 Մըթին ամպեր դըժխեմ մեղքի և մահուան:  
 Տիգրանակերտ Կ. ՅՈՎՀԱՆ Յ. ՄԻՆԱՆԵԱՆ

ՔՈՒ ՄԵՂՔԵՐԴ ՔԵԶԻ ՆԵՐՈՒԱԾ ԵՆ

(Բալէ Գոնոր)

Ա.

Գարնան առաջին օրերն էին, բլուրները ա՛լ  
 դունագեղուած էին պէտպէս գոյներով. մարգա-  
 դետիններու թարմ կանանչը փայլուն վարդագոյ-  
 նով մը, և բացուող ծաղիկներու և թուփերու  
 կապոյտովը ու դեղինով նախշուն էր: Հոս հոն  
 հերկուած դաշտերուն բացգոյն կարմիրն ու թուխը  
 կը ձոխացնէին դաշտանկարը, և այս ամէնուն վրայ  
 առաւօտեան արեւը իր ոսկեգոյնը կը թափէր:

Հեռո՛ւն, ցածուկ բլրաշարներու ետին Գալիլեայի  
 Ծովակը կապոյտ մը կը գծէր, որ նրբօրէն եզեր-  
 ուած էր մարգարտեայ գորշագոյնով մը: Բլուրնե-  
 րուն կողերուն վրայ, հոս հոն, թխագոյն դիւղակ-  
 ներ ցրցքնուած էին, որոնք հեռաւորութեան  
 և ոսկի արեւալոյսին պատճառով գրեթէ կերպա-  
 րանափոխուած էին, պզտիկ ու խեղճուկ խրճիթ-  
 ներէ սկսելով մինչեւ հոյակապ ու անառիկ ամ-  
 բուրիւնները:

Թուխ դաշտի մը մէջ գտնուող այս սեւորակ  
 գիւղակներէն մէկուն մէջ, երիտասարդ, առօր հո-  
 ղագործ մը, որ իր հերկած հողին նման թխորակ  
 էր, լրջադէմ, ազնիւ, սուր նայուածքով անձ մը, սերմ  
 ցանելով զբաղած էր: Բաղդատմամբ աւելի տկարա-  
 կազմ մարդ մը անոր քով եկաւ. այս մարդը աւե-  
 լի քաղցրադէմ ու խոհուն էր. աչքերն ու ձայնը  
 բանաստեղծի մը աչքերուն ու ձայնին կը նմա-  
 նէին:

\* \* \*

«Տէրը ձեզի հետ ըլլայ, եղբայր Ամրամ:»  
 «Ենծովայի խաղաղութեան արժանի ըլլաս, եղ-  
 բայր իմ Յովնաթան:»

Ո՛հ, սրչափ աղէկ է առաւօտեան օդը շնչել  
 լոյսը տեսնել, և մինչեւ ոսկորներուդ մէջ կազ-  
 դուրում մը զգալ:»

«Դուն թշուառութեան տունէն կու գաս—Սու-  
 գի տուն երթալը կոչունքի տուն երթալէ աղէկ  
 է: Սուգի տուն գացողը երանութեան կ'արժա-  
 նանայ, դուն ալ պիտի արժանանաս նոյն երանու-  
 թեան:»

«Այդ բան մը չէ: Պատանիին սիրտը շատ ցա-  
 ւած է: Ռարբին դեռ նոր մեկնած է անոր քովէն  
 և . . . :»

«Ան արեւելեան հովէն ետքն է որ նուր  
 թթուութիւն կը ստանայ: Ռարբին շատ ուսեալ  
 է ու շատ արդար, բայց վէրքի մը համար իւղը  
 լաւագոյն է քան քացախը:»

«Իրաւ, ան մեղաւորին քով յոյսի նշոյլ մը իսկ  
 չձգեր, բայց միայն ապագայ բարկութեան ահար-  
 կու ակնկալութիւն մը:»

«Ռարբիները կրնան սխալի, և քու ռարբիդ  
 կրնայ չգիտնալ Ենծովային բոյր կերպերը: Խլուրդը  
 շատ քիչ բան գիտէ արծիւին թոխքին վրայ:»

«Ա՛, եղբայր, դուն արդէն սկսեալսկի խառ-  
 նուածք մը ունէիր, բայց նորէն ալ ճշմարտու-  
 թիւն մըն է թէ չարը Արդարին հետ պիտի չբնա-  
 կի, և մեղք որ Պէնօ մեղաւոր մըն է:»

«Իրաւ է, բայց նորէն ալ ըսուած է. 'Բայց քու  
 քովդ է թողութիւնը':»

«Ռարբին կ'ըսէ թէ այս թողութիւնը մեղքերու որոշ մէկ տեսակին համար է միայն, և թէ մեծ քաւութեան մը ետքը Բայց մեր եղբայրը ինչպէս կրնայ թողութիւն գտնել մեծ յանցանքին համար: Եւ անկէ աւելին՝ ինչ քաւութիւն կարելի է անոր համար: Մինչեւ իսկ երէկ ան իր անկողինէն ուարբին կ'անիծէր:»

«Ահ, այնպէ՞ս կ'ընէր: Այդ արժանիք մըն է: Ես ալ պիտի ուզէի այդպէս ընել, բայց քաջութիւն չունիմ:»

«Քաջութիւն, երբեք, դուն անիծելու համար չափէն աւելի զօրաւոր ես: Բայց միայն թէ անէծքը տկար և ամօթալի կը նկատես: Բայց ինչ որ ալ ըլլայ՝ ուարբի մը անիծել անպէտ մեղք մըն է վերջապէս:»

«Երբեք, սիրտէն զարնուած մէկը ո՞վ կրնայ դատապարտել իբրեւ ապրող մեռել: Ռարբին քիչ մը խնայելու էր իր խօսքերուն: Կոտորած կոնակի մը վրայ բնո զնել զէջ բան է՝»

«Յիրաւի ես ալ շատ կը ցաւիմ մեր եղբոր համար: Մե՛ղք, խեղճը շատ տառապեցաւ:»

«Այո, բաւական շատ: Տառապանքի երեք երկար տարիներ . . .»

«Երե՛ք, հինգ երկար տարիներ. իրեն համար տասը:»

«Իրաւ, տարիները մեր քայլերուն հետ կը փախչին, բայց հիւանդութեան անկողնի մէջ պառկողին հետ ալ կարծես կը պառկին կը մնան:»

«Հի՛նդ երկար տարիներ. կը յիշե՞ս այն տառապալից ցորեկները և գիշերները զորոնք անցողինք անոր հետ . . .»

«Ահ, այդ մասին մի խօսիր:» յարեց Ամբամ անոր խօսքը կտրելով: «Կը ցաւիմ ու միանգամայն կ'ամչնամ այդ մասին. ամէն ալ կարծես յիմարացած էինք, բայց ինչ օգուտ որ ան կը տառապի:»

«Իրաւ է. Ծառեր կը փորձեն, բայց հազիւ մէկը կրնայ շահը տուն տանիլ: Ինչպէս կ'ըսուի առ հասարակ, և Պէնոյի համար ջահը արդէն շատոնց միայ սկսած էր: Ահ, միւսնոյն ատենը թէ՛ ապրիլ թէ՛ ալ մեռնիլ ցաւալի բան է:»

«Կ'ամչնամ որ զայն մոռցած եմ: Զօրաւորները տկարները կը մոռնան արդէն: Իր ցաւերը ինչպէս կը տանի: Աւա՛ղ. մե՛ղք որ զայն մոռցայ:»

«Ան իր մօրմէն զատ ամչնուս անէծք կը կարգայ:»

«Այդ ոչինչ բան մըն է. սիրտս կոտորած է անոր մասին: Ատեն մը շատ քաջասիրտ էր—և ինծի համար ամէն զոհողութիւն ընելու պատ-

րաստ: Ինչ հարկ. դուն ալ աղէկ կը յիշես:»

«Կը յիշեմ: Այդ ազնիւ գործ մըն էր: Ամէն ալ որչափ կը սիրէինք զայն: Աւա՛ղ, առողջներու սիրտը կարծես կը կարծրանայ: Բնաւ յոյս չկայ:»

«Երբեք, երբեք, աւա՛ղ, երբեք: Ոչ մարդոց, ոչ ալ Աստուծոյ քով յոյս կայ անոր համար:» ըսաւ Յովնաթան ձայնին ու աչքերուն մէջ յուսահատութիւն արտայայտելով:

«Աստուծոյ քով. ոչ եղբայրս, ո՞վ կրնայ զԱստուած փնտռելով գտնել:»

«Ռարբին կ'ըսէ . . .»

«Խնդրեմ, ինծի մի ըսեր թէ ուարբին ինչ կ'ըսէ. ան անզգային մէկն է. սրտաբեկութեանէ ինչ կը հասկնայ: Աբ. Գիրքը ինչ կ'ըսէ, Կոտորած ու խոնարհ սիրտը, ով Աստուած, դուն չես անարգեր:»

«Աւա՛ղ, ան կոտորած ու խոնարհ սիրտ մըն է: Ռարբին այդ մասին աղէկ խօսեցաւ Պէնոյի, բայց...»

«Խնդրեմ, ես ուարբիէն ու անոր խօսքերէն կշտացած եմ, և Պէնոյի ուարբին անիծելուն ալ բնաւ չեմ զարմանար:»

«Ես մեկնելու եմ. գործի համար քաղաք պիտի երթամ: Թերեւս կարենամ տեսնել Նազարէթի երիտասարդ Մարգարէն:»

«Ահ, ան մարդ մըն է զոր տեսնել կ'արժէ: Ես ալ շատ պիտի փափաքէի զայն տեսնել ու անոր խօսքերը մտիկ ընել: Ան շատ զարմանալի խօսքեր կը խօսի, բայց ուարբիները զայն չեն սիրեր:»

«Բայց ես քիչ մը վախ ունիմ թէ ժողովուրդը կը մոլորեցնէ: Մովսէսի և աւանդութիւններու շատ կարեւորութիւն չտար: Ռարբին անոր հայտնութիւններուն համար զայրոյթով լեցուած է:»

«Ռարբին. քանի որ ուարբին անոր դէմ զայրոյթով լեցուած է, ահա ճիշդ այդ իրողութիւնը Մարգարէին վարկը կը բարձրացնէ իմ առջեւ: Ծեծուած շունը խարազանին մասին զէջ կը խօսի:»

«Թերեւս ես չկարենամ լսել զայն: Մտիկ ընողները կ'ըսեն թէ զարմանալի խօսող մըն է: Ես շատ պարզամիտ մարդ մըն եմ և կը վախնամ թէ զիս կրնայ մոլորեցնել:»

«Գնա զայն մտիկ ըրէ, ու ինծի լուր բեր անոր մասին: Մնաս բարով: Աստուած հետք ըլլայ: Բու բերելիք տեղեկութեանդ կը սպասեմ:»

«Մնաս բարով. թերեւս ես քեզի ըսելիքներ ունենամ երբ վերադառնամ:»

(Շարունակելի)

# ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ

## ԲԱԺԻՆ

ՔԱԼԻՖՈՐՆԻԱ ԿԸ ՀՐԱՒԻՐԻՆ ԶԱՇԽԱՐՀ  
 ՓԱՆԱՄԱԽԱՂԱՂԱԿԱՆԻ ՄԻՋԱԶ-  
 ԳԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ  
 1915ԻՆ

Այսօր բոլոր քաղաքակիրթ աշխարհի ուշը կեղ-  
 րոնացած է Փանամայի Ջրանցքին բացումին վրայ:  
 Մարդկային պատմութեան մէջ զրեթէ անզուգա-  
 կան եղող այս մեծ ձեռնարկին յաջողութենէն  
 մարդկութիւնը մեծ ակնկալութիւններ ունի: Դա-  
 րերէ ի վեր միշտ դէպի արեւմուտք արշաւող քա-  
 ղաքակիրթութիւնը, այս ջրանցքին բացումով վեր-  
 ջապէս դուռ մը դատած կ'ըլլայ Խաղաղական Ով-  
 կիանոսն ալ թափանցելու: Երբ Բոլոմպոս նաւե-  
 րովը ճամբայ ելաւ, իր փնտածը Ամերիկան չէր,  
 այլ հին ծայրագոյն Արեւելքն էր — Հնդկաստանը,  
 Չինաստանը և անոնց ոսկին ու համեմունքը:  
 Մարդիկ միշտ ցանկացեր են գանել Արեւելքը և  
 իր ոսկին ու կնդրուկը: Այնպէս որ Բոլոմպոսի  
 փնտոելու նպատակին մէջ նորութիւն մը չկար:  
 Միակ նորութիւնը հետեւած ուղղութիւնն էր: Ան  
 դէպ արեւմուտք դնաց, Բուն իր նպատակին  
 հասնելու տեսակէտով, Բոլոմպոսի ճամբորդու-  
 թիւնը կատարեալ անյաջողութիւն մըն էր: Ծամ-  
 բայ ելած էր ուղղակի Ասիա հասնելու, բայց ճամ-  
 բան բաղխեցաւ այն երկայն ու լայն ցամաքնե-  
 րուն զորս այժմ Ամերիկաներ կը կոչենք: Իրմէ  
 ետքը աւելի քան չորս դար անցած է և իր յա-  
 ջորդները ահա հազիւ կրցին այդ միջանկեալ հըս-  
 կայ ցամաքներուն յաղթել և նաւերով անոնց մէ-  
 ջէն անցնելով Ասիա հասնիլ: Փանամայի Ջրանց-  
 քին բացումը այս թուերին առաջին հատանումն  
 է, Բոլոմպոսը արգելող ամբարտակին վերջնական  
 բարձումն է, չորս երկար դարերու արգելքին վեր-  
 ջացումն է, դէպ Արեւելք յառաջխաղացութեան  
 վերսկսումն է:

Այն քաղաքակիրթութիւնը, որուն արեւմտեան  
 ազգեր կը պարտին իրենց մեծութիւնն ու աճու-  
 մը, իր ծագումը առած է Եփրատի և Նեղոսի ա-  
 փուռներէն, Պաղեստինի և Յունաստանի բլուր-  
 ներուն եմակներէն: Այդ քաղաքակիրթութիւնը իր  
 կոնակը դարձուցած հին Արեւելքին — Հնդկաս-  
 տանին ու Չինաստանին — երկրագունդիս վրայ  
 իր արշաւը շարունակած է միշտ դէպի արեւ-  
 մուտք: Յունաստանէն անցած է Հոռոմ, Սպանիա,  
 Ֆրանսա, Դերմանիա և Անգլիա, անկէ ալ Ատ-

լանտեան Ովկիանոսէն անդին՝ Ամերիկա: Այժմ  
 Փանամայի Ջրանցքին բացումը կը նշանակէ թէ  
 ան թափանցած է նաեւ Խաղաղական Ովկիանոսը:  
 Ահա սա է ասպարէզը ուր աշխարհի երկու կէտե-  
 րը — Արեւելքն ու Արեւմուտքը — կը գանուին  
 ոչ թէ կոնակ կոնակի, այլ երես երեսի: Թէ ի՞նչ  
 պիտի ըլլայ ատոր արդիւնքը՝ ոչ ոք կրնայ այժմէն  
 լիտլի գուշակել: Բայց ամէն տեսնել ու խորհիլ  
 դիտող էակ՝ կրնայ գիտնալ թէ Փանամայի Ջրանց-  
 քին բացումովը մարդկային ազգին պատմութիւնը  
 իր վերջին դրուագը թեւակոխած կ'ըլլայ: Այսպի-  
 սի կարեւոր դէպք մը պէտք է տօնուի հոն, ուր  
 ան նշանակութիւն ունի, ուր ցեղերը իրարու կը  
 հանդիպին, ուր ասպարէզը կազմ ու պատրաստ է,  
 ուր մարդ կրնայ ուղղակի Արեւմուտք նայիլ Ա-  
 րեւելքը տեսնելու համար. և այդ վայրը Սան  
 Ֆրանսիսքօն է: Թէեւ Ամերիկայի մէջ կային ու-  
 րիշ մրցակից քաղաքներ ալ, որ ուզեցին Արեւե-  
 տահանդէսը ունենալ, սակայն Ամերիկեան կառա-  
 վարութիւնը շատ իմաստութեամբ Սան Ֆրանսիս-  
 քօն որոշեց իրրեւ յարմարագոյն վայրը:

Փանամայի Ջրանցքը, Ատլանտեան Ովկիանոսը  
 Խաղաղականի հետ միացնելու համար փորուած  
 այս ահագին առուն, թէեւ 50 մղոնէն քիչ աւելի  
 երկայնութիւն ունի, իր դիրքին և բնական զբ-  
 ուարութիւններուն պատճառաւ՝ անոր բացումը  
 մարդկային ճարտարապետական և մեքենագիտական  
 ամենամեծ ձեռնարկներէն մէկը կը սեպուի: Այս  
 ձեռնարկը զլուխ հանելու համար ամենամուտ  
 ճարտարապետներու երկարամեայ համբերատար  
 աշխատութեան հետ միասին Ամերիկեան կառավա-  
 րութեան կողմէ աւելի քան 375,000,000 տոլարի  
 ծախք մը հարկ եղաւ:

Փանամայի Ջրանցքին բացումովը աշխարհի ա-  
 մէնէն կարեւոր առեւտրական կեդրոններուն միջև  
 հեռաւորութիւնը մեծապէս կը նուազի, այնպէս որ  
 կարծես թէ աշխարհ կէս մը կը պզտիկնայ և յա-  
 րաբերութիւնները կը դիւրանան: Նիւ Եորքէն  
 Սան Ֆրանսիսքօ այժմ նաւային ճամբով հեռաւո-  
 րութիւնն է 13,107 մղոն: Ջրանցքին բացումովը  
 այդ երկու քաղաքներուն միջև նաւային հեռաւո-  
 րութիւնը կ'ըլլայ 5,272 մղոն: Մարսիլիա այժմ  
 Սան Ֆրանսիսքօէն նաւային ճամբով 13,244 մղոն  
 հեռու է: Ջրանցքի ճամբայով պիտի ըլլայ միայն  
 8,325 մղոն: Պոլիս ներկայիս Սան Ֆրանսիսքօն  
 նաւային ճամբով 14,352 մղոն է: Ջրանցքին բա-  
 ցումովը հեռաւորութիւնը պիտի իջնայ 9,432 մղո-  
 նի, այսինքն մօտաւորապէս 5,000 մղոնի շահ մը:  
 Փանամայի բացումովը Պոլսոյ և Սան Ֆրանսիսքօ

ի միջև ուղղակի նաւային յարաբերութիւն հաստատել շատ դիւրին և մեծապէս շահաւոր պիտի ըլլայ, և հասարակ բան մը պիտի ըլլայ Պոլիս նաւնստի և Սան Ֆրանսիսքո դուրս ելլել, և հակադարձաբար: Այսպէս, այս Զրանցքին բացուած, թէեւ մեծածախս, պիտի ըլլայ մարդկութեան մեծագոյն օրհնութիւնը:

Սան Ֆրանսիսքո բնական դիրքով, կլիմայով և ճարտարապետութեամբ աշխարհի ամենագեղեցիկ և առողջարար քաղաքներէն մէկն է: 1906ի զարնան երկրաշափէն ետքը պատահած մեծ հրդեհէն քաղաքը դրեթէ ամբողջութեամբ կործանելով, յետոյ գերմարդկային ճիգերով վերաշինուեցաւ մօտաւորապէս 500 միլիոն տոլարի ծախքով: Վերաշինուած քաղաքը աշխարհի ամենագեղեցիկ արդիական ու ճաշակաւոր քաղաքն է: Այնպէս որ Փանամայի Զրանցքին բացման հետ պիտի տօնուի նաեւ Սան Ֆրանսիսքոյ վերաշինութիւնը որ դրեթէ Զրանցքին բացման չափ նշանաւոր է իբրև յաղթանակ մարդկային ճարտարապետութեան և ձեռնբեցութեան: Սան Ֆրանսիսքոյ ամառուան զովութիւնը և ձմեռուան մեղմութիւնը արդէն նշանաւոր է: Կլիման իր լաւագոյն դրամադրութիւններէն մէկը կը սեպուի. և ամբողջ տարին Արուեստահանդէսը տօնելու յարմարագոյն վայրն է:

Փանամա-Խաղաղականի Միջազգային Արուեստահանդէսը կոչուած է ըլլալ մինչև ցարդ տեղի ունեցած Աշխարհահանդէսներուն մեծագոյնը և ամէնէն փայլունն ու հրահանգիչը: Հոն պիտի ցուցադրուին ամենակատարեալ կերպով աշխարհի երկրագործութիւնը, վաճառականութիւնը, արհեստները, ճարտարարուեստները, հանքերը, գեղարուեստները, գիտութեան և մարդկային հանճարին վերջնագոյն յաղթանակները ցամաքի վրայ, ջուրի և օդի մէջ: Աշխարհի վրայ անթել հեռագրի մեծագոյն կայանը պիտի հաստատուի Արուեստահանդէսին մէջ: Ան պիտի ըլլայ ժամադրաւայրը և ցուցադրաւայրը բոլոր հանճարներու և գիւտերու:

Խաղաղականի թագուհին եղող գեղակերտ Սան Ֆրանսիսքո իր ամենագեղեցիկ քաղաքամասերը յատկացուցած է Արուեստահանդէսին: Աշխարհի լաւագոյն նաւահանդիստներէն մէկը Խաղաղականի հետ կցող «Ոսկի Դուռ» (Golden Gate) կոչուած գեղեցիկ նեղուցին եզերքը թառած այս Արուեստահանդէսը ապահովաբար աշխարհի ամէնէն հրապուրելի վայրը պիտի ունենայ:

Չէ եղած աշխարհի վրայ Արուեստահանդէս մը զոր սկսելու համար այնչափ մեծ դրամական պատրաստութիւն տեսնուած ըլլայ, որչափ Սան Ֆրանսիսքոյ

սիսքոյ այս Արուեստահանդէսը: Սան Ֆրանսիսքոյ քաղաքացիները արդէն ստորագրած են 7,500,000 տոլար, Քալիֆորնիոյ նահանգը, օրէնսդիրներու քուէով, որոշած է 5,000,000 տոլար: Սան Ֆրանսիսքոյ քաղաքը «պանտով» (պարտաթուղթ) որոշած է 5,000,000 տոլար. գումար 17½ միլիոն տոլար: Ասկէ զատ Քալիֆորնիոյ զանազան գաւառները (քուէով) քուէով որոշած են զանազան գումարներ որոնք մօտաւորապէս 4 միլիոն տոլարի կը հասնին: Ըսել է թէ արդէն պատրաստ կայ ընդամէնը 20 միլիոն տոլարէն աւելի:

Միաց. Նահանգաց Նախագահ Թէֆթ անձամբ անցեալ Հոկ. 14ին Սան Ֆրանսիսքոյ նշանաւոր «Կուլտըն Կէյթ» փարքին մէջ արծաթ բրիչով մը փորելով Արուեստահանդէսին հիմնարկէքը կատարեց մեծ հանդիսաւ որութեամբ:

Ասով Փանամա-Խաղաղականի Համազգային Արուեստահանդէսին վարչութիւնը հրաւէր կը կարգայ բոլոր Հայերուն և բոլոր ազգութիւններուն՝ այցելելու և մաս առնելու 1915ի Արուեստահանդէսին մէջ: Եկէք Սան Ֆրանսիսքո, Հայեր, բերէք ձեր վաճառականութիւնը, ձեր ճարտարարուեստը, ձեր գեղարուեստը, ձեր գիւտերը, ձեր լաւագոյն ցուցադրութիւնները: Քալիֆորնիա հրաւէր կը կարգայ ամբողջ աշխարհի Սան Ֆրանսիսքո գալ 1915ին:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար ամէն ոք կրնայ իր լեզուով — ըլլայ Հայերէն, ըլլայ Թրքերէն — գրել վարչութեանս: Թարգմանի կարգադրութիւնը եղած ըլլալով, ամէն Անգլիերէն չհասկցող իր լեզուովը պատասխան պիտի ստանայ: Դիմել ուղղակի վարչութեանս:

Panama-Pacific International Exposition,  
San Francisco, Cal. U. S. A.

ԿՐՕՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ  
2.

չ. Ի՞նչ է փիլիսոփայութիւնը. Փրոֆ. Մաքս Միլլըրի (Օքսֆորտ) բառերը գործածելով «Գիտութեան գիտութիւնն է»: Գիտութիւնը զէպքեր և օրէնքներ կը խուզարկէ, իսկ փիլիսոփայութիւնը զանոնք կը մեկնէ, պատճառները կը հասկնայ, մասերը դիտնալով ամբողջը կը կազմէ. երեւցած բաներէ աներեւոյթները կը գուշակէ, ինչպէս Ակասիս և Կրէյ կրնան բացատրել անասունի մը կենաց պատմութիւնը՝ անոր միայն մէկ ակասն, կամ տունկի մը լոկ մէկ տերեւը ունենալով: Ամէն գիտութիւն և արուեստ իր փիլիսոփայութիւնը ունի: Մանուկը կը հարցնէ «Ի՞նչ է այդ». պատաս

նին կը հարցնէ «Ինչպէս է այդ» իսկ չափահասը դո՛ւ չըլլար այդ պատասխաններով ու կը հարցնէ «Ինչո՞ւ այդպէս է» . ասիկա փիլիսոփայական հարց մըն է : Մարդկութիւնը այս երեք աստիճաններէն վեր բարձրացած է, այսինքն արուեստ, գիտութիւն և փիլիսոփայութիւն վերելքի պատուանդաններ են : Ծանօթէ՛ն՝ անծանօթը, ներկայէ՛ն՝ բացական գիտնալ կ'ուզէ : Փիլիսոփաները մեր ուսման հարցները, մեր հնարքներն են : Ուստի փիլիսոփայութիւնը չե՛նք չէ . լոկ անխուզարկու հասարակ մանկանացուներուն համար ճիշտնարանութիւն է : Գիտութեան գիտութիւնն է այն : Պարզ արուեստաւորը թուրակօրէն տեսածը կ'ընէ . գիտնականը յարաբերութիւններով, իսկ փիլիսոփան պատճառաբանութիւններով, նոյն ատենը չի կարծուի թէ ասիկա լոկ համալսարանական բան մըն է . մանկապարտէզի սղօտիկներն ալ երբեմն փիլիսոփայական հարցումներ կ'ընեն, ինչպէս նաեւ պարզ գիւղացին : Շուկայի, դպրոցի, և եկեղեցիի մէջ պէտք է այս երեք աստիճաններէն վեր բարձրանալ ու այս երեքով զբաղի :

Է. Ի՞նչ է կրօնը . Ասիկա մտաւորական երեք կարողութեանց երկրորդին կը վերաբերի, ինչպէս նաեւ արուեստն ալ անոր մէկ մասն է . այսինքն զգացման կը վերաբերի, թէպէտեւ խորհուրդն ու կամքն ալ մաս ունին : Կրօնը և արուեստ միեւնոյն աղբիւրէ բղխած են : Արուեստը գեղեցիկի կամ գերագոյնին ներկայութեան մէջ զգացման արտայայտութիւնն է, ինչպէս արդէն տեսանք, իսկ կրօնը՝ Աստուածայինին ներկայութեան մէջ զգացման արտայայտութիւնը :

Երբոր Աստուածայինը կը նկատուի կատարեալ և գեղեցիկ, ինչպէս նաեւ ճշմարիտ և բարի, յայնժամ կրօնը և արուեստ մասամբ մը միեւնոյն տարրերը կ'ունենան : Աստուածայինին ներկայութեան ատեն եղած գլխաւոր զգացումը վերաբերումի զգացումն է : Մաքս Միլլըր կ'ըսէ թէ Մարդս ինքնագիտակցութեան եկած ատենը Աստուծոյ մը գաղափարով կամ Աստուծով մը բռնուած է : Եսին գիւտը կամ ինքնագիտակցութիւնը անհուն անձին գիւտին առաջնորդած է :

Կրօնը իր նախնական վիճակին մէջ մարդուն խորհածը չէր . քանզի ասիկա վարդապետութիւն, դաւանութիւն և փիլիսոփայութիւն է . ոչ ալ կրօնը՝ կանոնակէզ մարդուն ըրածն էր, քանզի մարդուն գործը ստիպման ու հարկաւորութեան տակ եղած է : Կրօնը իր նախնական վիճակին մէջ ան է՝ ինչ որ մարդն էր — այսինքն գերագոյն անձի մը ներկայութեան մէջ ինչ որ մարդը կը զգար՝ ան

էր անոր կրօնը : Եւ անկէ վերջը զգացման հետեւութիւնը ըլլալով ինչ որ մարդը կը խորհէր և կ'ընէր՝ ան եղաւ անոր կրօնը : Աստուածայինին ներկայութեան ներշնչումով եղած զգացումը՝ երբոր խորհուրդի կը փոխուի, աստուածաբանութիւն կ'ըլլայ . երբոր այս զգացումը կամքի կը փոխուի՝ այնժամ կրօնը ամէն օրուան դործ և արարք կ'ըլլայ՝ որ է կրօնի գործնականացումը :

Անսահմանը, որ կրնայ խորհուիլ բայց չկրնար պատկերացուիլ, կրօնքի միջոցաւ միտքի առջեւ պարզուած է : Ժամանակի անսահմանութիւնը որ է յաւիտենականութիւն՝ գիտութեան մէջ անհունութիւնն է, ամենագիտութիւն, զօրութեան մէջ ամենակարողութիւն, բարութեան մէջ սրբութիւն է : Սիրոյ անհունութիւնը ներշնչուած է Քրիստոսի չարչարանքներով :

Հետեւաբար մարդկային հոգւոյն անհրաժեշտ պահանջը ու աշխարհիս ամէնէն ընդարձակագոյն բանը կրօնքն է, և անոր մեծոյդ ազդեցութիւնը մտքի վրայ՝ նոյնպէս ազդեցութեանց ընդարձակագոյնը ըլլալու է : Դժբախտաբար կրօնքի լաւագոյն կուլտուրական և դաստիարակող պաշտօնը սահմանափակուած է Աստուծոյ էական բաներու տեղ՝ մարդոց ոչ-էական բաները (ծէսեր և արարողութիւններ) դնելով :

Ինչպէս գեղեցիկին զգացումը ի բնէ է, նոյնպէս գերագոյնին զգացումը . ինչպէս ճշմարիտին խորհուրդը ի բնէ է՝ նոյնպէս անհունինը . ինչպէս բարիինը՝ նոյնպէս սուրբին և կատարելաինը ի բնէ է . ուստի մէկը ընդունիլ և միւսը ուրանալ ոչ միայն անտրամաբանական այլև յիմարութիւն է :

Մինչեւ ցարդ տեսանք արուեստին, գիտութեան, փիլիսոփայութեան և կրօնքին ազնադրութիւնը, անոնց իրարու հետ յարաբերութիւնը ու մարդկային մտքին ու հոգւոյն բնական պահանջումը ըլլալը, ինչպէս նաեւ ճշմարիտ յառաջդիմութեան կամ քաղաքակրթութեան համար բազմակողմանի զարգացման պէտքը :

Հիմա դանք մեր բուն նիւթին .  
Քրիստոնէական կրօնը Կաթոլիկութեան զարգացման միջոց եղած է ինչ որ քրիստոնէական կրօնը չէր : Այսինքն քրիստոնէական կրօնը քրիստոնէական է :

Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵՍԻ  
(Շարունակելի)

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԵԱՆՔ ԵՒ ՌԻՒՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ Գ.

Ընկերվարութեան ու անաստեղծութեանը չբերեալ անբնական դաշնակցութիւն: Ինծի միշտ տարօրինակ երեւցած է որ թուրքիոյ և Պալքանեան թերակղզիին շատ մը ընկերվարականները ինքզինքնին անաստեղծ կը նկատեն ու ժողովուրդին կողմէ ալ այնպէս կը նկատուին: Այս յօդուածին կէտ նպատակին ընկերվարականութեան թեր ու դէմ փաստաբերութիւններ ընել չէ, ոչ ալ Աստուծոյ ներկայութիւնը հաստատել կամ ջրել: Այս յօդուածով պիտի փափաքէի ցուցնել թէ ընկերվարութեան գաղափարականներուն հաւատալու և Աստուծոյ գաղափարը մերժելու մէջ տրամաբանական կապակցութիւն մը չկայ: Այս կերպով կրնանք այն եզրակացութեան հասնիլ թէ ընկերվարականները և կրօնասէրները աւելի բնական կերպով մը դաշնակիցներ, համամիտներ են քան թշնամիներ ու տարհամոզուածներ:

Ընկերվարութեան ծրագրերը Ամերիկացի յայտնի ընկերվարականի մը կողմէն հետեւեալ կերպով կը բացատրուի: «Ընկերվարութեան ծրագիրն է իւրաքանչիւր ազգի մէջ քաղաքական ոյժերը ապահովութեան տակ առնել, դրամագլուխը անհատական սեփականութենէ հանել և արտադրիչ ստացուածքը հասարակաց ընել»: Արդ այս ծրագիրին մէջ չկայ բան մը որ չպաշտպանուի Քրիստոսեայէ մը, Մահմետականէ մը, Հրեայէ մը, անաստեղծէ մը, կամ Հնդկէ մը, —եթէ այս բանաւոր և իմաստուն երեւայ անոր: Միւս կողմէն այս ծրագիրին մէջ չկայ բան մը, որ արգելք ըլլայ անոր պաշտպանողին, Քրիստոսեայ, Մահմետական, Հրեայ, անաստեղծ կամ Հնդկի ըլլալուն —եթէ հաւատքի այս դրութիւններէն որեւէ մէկը բանաւոր ու ճշմարիտ երեւայ անոր: Ուրիշ խօսքով ընկերվարութեան իմաստուն կամ անիմաստ բան մը ըլլալուն մասին մարդու մը տեսութիւնները մտաւոր կապակցութիւն մը չունին անոր կրօնքի մասին ունեցած տեսութիւններուն հետ: Ընկերվարութիւնը մեթոտ մըն է զոր ումանք գտած են մարդկութեան վիճակը բարելաւելու համար: Եթէ այն ինծի իմաստուն մեթոտ մը երեւայ այս պատճառ մը չէ ինծի որ Աստուած չկայ ըսեմ: Բայց եթէ այն ինծի յիմարական մեթոտ մը երեւայ այդ ալ պատճառ մը չէ որ անոր հաւատացող մէկը անաստեղծ կոչեմ: Երկուքն ալ ընել անտրամաբանական է: Ընկերվարականի մը համար ալ անտրամաբանական է «Դերաբերիտտ» կամ ուրիշ անուններով անուանել զանոնք, որ ընկերվարութեան ծրագիրը չեն հաստատեր: Մար-

դիկ կան որոնց ամէնէն մեծ բաղձաքն է մարդկութեան վիճակը բարեկարգուած տեսնել, բայց միեւնոյն ատեն չեն ալ կարծեր թէ ընկերվարութեան մեթոտները կրնան այդ բաղձացեալ նպատակը իրագործել: Եթէ անոնք այդ բաղձալի արդիւնքները ուրիշ միջոցներու մէջ լրջօրէն կը փնտոնեն՝ անոնք ալ ընկերվարականներուն չափ գովելի են իրենց այդ ձեռնարկին մէջ: Վերջ ի վերջոյ ժողովուրդներու մեծամասնութիւնը պիտի վճռէ այս հարցերու մասին և պիտի ընտրէ այն մեթոտները, որ աւելի բանաւոր կերեւան իրենց:

Քրիստոսեայ Գործադրողք Ժ: Ամէնդ ալ լսած էք այն մեծ բանթողին մասին զոր Անգղիոյ նաւազները ըրին անցեալ ամառ, և որով վարձքի կարեւոր յաւելում մը ստացան: Բայց ամէնդ ալ չէք լսած թէ զործաւորական այդ շարժումին գըլխաւոր լեռն էր Անկլիքան Երէց մը, Հայր Հափքինս: Սեպտեմբերի մէջ ան Լոնտոնի Ընկերվարական Հաստատութեան մէկ շէնքին մէջ մեծ բաղձութեան մը ուղերձ մը խօսեցաւ: Հաստատութեան Ֆելչըք կոչուած պաշտօնական ամսաթերթը այսպէս կը նկարագրէր այդ ուղերձը: «Ան (Հափքինս) ջերմապէս ընդունուեցաւ իբրեւ մէկը այն յառաջապահներէն, որոնք աշխատած են ապահովելու միջոցներ, որով հազարաւոր գործաւոր նաւազներ, թէ՛ ցամաքի թէ՛ ծովի վրայ, իսկապէս մարդկային կեանք մը ապրելու համար լաւագոյն պայմաններու տակ գտնուին: Ինքն էր որ ամառուան ընկերային մեծ պայթումին կրակը դպցուց: Հայր Հափքինս իրական մէկ նկարագրութիւնը ըրաւ նաւազներու տխուր վիճակին, ու բացատրեց այն անակնկալ կերպը որով անոնք պիտի կրնան վիճակի բարելաւում մը ունենալ: Ան և անոնք իրենց բոլոր միջոցները գործածեցին խնդիրը բարեկամական կերպով կարգադրելու համար: Բայց նաւային ընկերութիւնները զիջումներ ընել մերժած էին: Բանթող ընելէ զատ ուրիշ միջոց չէր մնացած: Լսողները շուտով պիտի չմոռնան անոր թատերադրական նկարագրութիւնը «Սիմփի» ի նաւազներուն կատարած բանթողին մասին, որ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրեց նաւազներու պահանջներուն վրայ: Հայր Հափքինս իր ունկնդիրները ծիծաղի և արցունքի ու զայրոյթի միջեւ առկախ թողուց ու թրթռացուց անոնց սիրտերը, և աստիճանաբար բարձրացուց ամէնէն սպաւորիչ վերջաբանի մը, որուն մէջ պնդեց թէ, Նազովրեցի Յիսուս բոլոր դարերու ամէնէն մեծ Գործաւորական Լիտըրն էր, և բոլոր ունկնդիրներու Անոր հետեւիլ յանձնարարեց ջերմապէս:» Լընթըն Թրէյթ

Եւսկէն թերթին մէջ գրուած յօդուած մը հետեւեալը կերպով կը խօսի Հայր Հափքինսի մասին. «Վերջապէս Աշխարհի Գործաւորական Շարժումը Գրոմուէլ մը գտաւ:» Եւ ո՞վ է այս Գրոմուէլը. Բրիտանեայ. Երէջ մը, որ Նազովրեցի Յիսուսը «Բոլոր դարերու ամէնէն մեծ Գործաւորական շարժումը կ'անուանէ:» Բայց նորէն ալ Մօտաւոր Արեւելքի մեր ընկերվարականները կը մտածեն թէ գործաւորական շարժումներու համակիր բոլոր մարդիկ անաստուածներ են:

Յաջորդ յօդուածով մը պիտի խօսինք Անգղիացի և Ամերիկացի ընկերվարականներէն շատերուն Բրիտանեէութեան հանդէպ և շատ մը Բրիտանեաներու ալ ընկերային խնդիրներու շուրջ ունեցած վերաբերումներուն վրայ:

Բրիտանեայ Ընկերվարական

ՈՒՍՈՒՑՁԻ ԿԵԱՆՔԷՍ

«Իսաստիարակութեան նպատակն է, հայթայթել մարմինին այն գորութիւնը զոր պարտի ունենալ, և հոգիին այն կատարելութիւնը որու ընդունակ է:» Պլատոն

Մարդու ընդունակութիւններուն զարգացման ու կատարելութեան սատարող ազդակներէն մին, հաւանորէն ամենակարեւորը, դաստիարակութիւնն է: Այսօր դաստիարակութեան կարեւորութիւնը չգնահատող քիչեր կը գտնուին: Ես այս ամենապատուական ծառայութեան մէջ բաւական ատեն զտնուելու բարեբաղդութիւնը ունեցած եմ: Տասնըութը տարեկան էի, երբ ուսուցչութեան սկսայ և իբր տասնըորս տարի գործեցի տարբեր տեղեր կարեւոր պաշտօններով: Կ'ուզեմ այս յօդուածով ցոյց տալ թէ ուսուցչութեանս բոլոր տեւողութեանը ինչ հիմնական սկզբունքներով գործածեմ: Պաշտօնավարութեանս միջոցին միշտ Նախահամարութեան դիւ առաջնորդած գիրքին յարած և ջանացած եմ հոն միշտ ամենալաւն կատարելու:

Ջանացած եմ ուղղակի և անուղղակի ազդեցութիւններով կառավարել աշակերտներս: Անուղղակի ազդեցութեանս զօրաւոր ըլլալուն համար անձնական կատարելութեան և զարգացման խիստ կարեւորութիւն տուած եմ: Անձնապէս միշտ ուսման և զիտութեան հետեւած եմ, վասն զի այնպէս հաւատացած եմ որ ուսուցիչ մը որքան հմուտ ըլլայ այնքան ազդեցութիւն և յարգանք կը վայելէ: Աշակերտներ հմուտ ուսուցչի մը ներկայութեանը գրեթէ միշտ կը խոնարհին: Ընդհակա-

ռակը ուսուցիչ մը որքան տգէտ է՝ այնքան անկարող ու անազդեցիկ է և աշակերտներուն ծաղրին առարկայ կը դառնայ: Չոյս լաւ գիտնալով գրեթէ միշտ ինքնազարգացման ջանացած եմ, և կը ջանամ, վասն զի ինչպէս Երնկ կ'ըսէ, «Շատ գիտութիւնը կը յայտնէ մարդուն իր ընդարձակ տգիտութիւնը:» «Իմաստութեան սկիզբը վախճան չունի, իմաստութիւնն անյագ է, կը լսուի ովկէանը, ու տակաւին կը գոչէ, Ծարաւի եմ: Օ՛հ, իմաստուն հոգին որքան մեծ է, տիեզերքը չկրնար լիցընել, լրացնել զայն. հոն պարապութիւն կայ միշտ, անեղ, անըմբռնելի դատարկութիւն մը: Իմաստութիւնը դժգոհ է այն ատեն երբ գոհ է: Իմաստութեան դպրոցը չըջանաւարտ չունի: Յիմարը կ'ըսէ, 'Ուսումս աւարտեցի', իմաստունը կ'ըսէ, 'Սկսայ', այն որ աւարտեցի կ'ըսէ դեռ սկսած չէ:» Գիտութիւնը այն ըմպելիին կը նմանի որմէ մարդ որքան ըմպէ, այնքան կ'աւելնայ պապակը: Յաւտեանականութիւնն իսկ բաւական չէ մարդու այս տենչանքը յազեցնելու: Հմտութիւնը ոչ թէ միայն ուսուցչական ասպարէզի մէջ, հապա դրեթէ ամէն շրջանակներու մէջ յարգանք և ազդեցութիւն կը ստեղծէ:

Սակայն նոյն ատեն գիտնալով որ լոկ հմտութիւնը բաւական չէ հոգր ու տեւական ազդեցութիւն մը առաջ բերելու, նաեւ ջանացած եմ անձնական կատարելութեան և նկարագրի ազնուութեան տիրանալու: Աչքերս միշտ դէպի բարոյական կատարելութեան բարձունքը յառած եմ. այնքարը որ սայթաքմանս պատճառ եղած է՝ ջանացած եմ զայն ելնարան մը ընել և անոր միջոցով աւելի վեր ելլել: Գիտութեան վերջ, լաւ եւս առաջ, ուսուցչի մը կեանքն է որ խորունկ ու տեւական ազդեցութիւն կը գործէ պատանիներու մըտքին ու սրտին և հոն նոյնանման կեանքեր կ'արտադրէ: Ինչո՞ւ Մեծ Ուսուցչապետին ազդեցութիւնը այնքան խորունկ, այնքան տեւական և այնքան բարձր կեանքեր արտադրած է, վասն զի Անիկա ուսուցանելէ աւելի «պլաթ» է: Ապրուած կեանքն է որ կ'ապրեցնէ: Ո՛րքան ուսուցիչներ տեսած եմ, որոնք բարոյական սկզբունքներու երբեք կարեւորութիւն չեն տար: Աղնիւ ու անբասիր կեանք մը չեն ապրիր, անա այդ պատճառաւ չեն կրնար նկարագրի ազնուութիւն և կեանքի անբժութիւն ներշնչել իրենց աշակերտներուն: Շատ ուսուցիչներ կան որոնք բարոյականի դասը կ'աւանդեն, սակայն իրենց զեղիս ու ցոփ կեանքովը քար դայթակութեան կ'ըլլան: Եւ այսպէս բազմաթիւ կեանքերու փճացման, ապագայ սերունդը

ներու վասթարացման և ազգերու հիմնադատակ կործանման պատճառ կ'ըլլան :

Աշակերտներուս ուղղակի ազդել ջանացած միջոցիս աշխատած ես սա երեք սկզբունքներուն կիրարկման :

Նախ նկատի առած եմ անոնց ֆիզիքական վիճակը, անշուշտ պարագաներուն ներածին չափ : «Առողջ միտք առողջ մարմնի մէջ» : Ուսուցիչները այս կէտը երբեք մոռնալու չեն, նոյն իսկ եթէ չզբնահատուին, ուղիղ չհասկցուին, ու ազէտներու և նախանձոտներու կողմէն քննադատուին : Աշակերտներս ոչ չափազանց սեղմած եմ, ոչ ալ չափազանց թոյլ թողած եմ : Անոնք ջուրթակի թելերուն կը նմանին, երբ չափազանց լարուին, կը կտորին, կամ եթէ չափազանց թոյլ թողուին՝ եղանակ չեն արտադրել :

Նաեւ բնականաբար և մասնաւորաբար ի նկատ առած եմ անոնց իմացական զարգացումը, աշխատած եմ անոնց բոլոր իմացական կարողութիւնները ներդաշնակաբար անցնելու : Ի վաղուց անտի դպրոցը լոկ իմացական զարգացման վայր նկատուած է գրեթէ ամէն տեղ : Թէպէտեւ այս դադափարը ամէն կերպով շիտակ չէ, այսու հանդերձ կարեւոր է : Այն դպրոցը որ ամէն պարագայի ներքեւ աշակերտին մտաւոր ընդունակութիւնները չմշակեր, խեղճ դպրոց մըն է :

Նաեւ սրտի կրթութեան, նկարագրի բարձրացման հոգածու եղած եմ : Այնպէս համոզուած եմ որ առանց անոր մարդ կատարեալ մարդ չկրնար ըլլալ : Սակայն ցաւալի է որ խիստ շատ անձինք Սկիւրի բաժին պէս միտքը զպրոցին կը յանձնեն, իսկ նկարագրը՝ դիպուածի : Ջանացած եմ աշակերտներուս բանականութիւնը՝ ճշմարտութեան, խիղճը՝ ուղղութեան և կամքը՝ բարիին մէջ արթնցնել ու վարժեցնել : Աշխատած եմ աշակերտներուս ներսիդին տենչ մը արթնցնել դէպի վսեմ ու դիւցազնական կեանքերու դադափարականը ձգտելու : Ըստ իս ահա այս է դաստիարակութեան «իբր» — մանուկին մէջ մարդը զարգացնել, մանուկը մարդ պատրաստել : Նկարագրը կրնայ առողջ մարմին մը և զարգացած միտք մը ապահովել, նաեւ կրնայ ֆիզիքական կորովի և ուղղադատ միտքի պահպան հրեշտակը ըլլալ : սակայն սոսկ ֆիզիքական կորով և իմացական ոյժ չեն կրնար ազնիւ նկարագրի ու օգտակար մարդ շինել : Իմէ՛մէ՛ Մարգէն կ'ըսէ, «Ամէն դաստիարակութիւն որ կրճական (Քրիստոնէական) չէ, անկատար կ'ընէ մարդը, և միայն իմացական կենդանի կազմելու կրնայ յաջողիլ : Սխալ է կարծել թէ

մարդ միայն գիտութեամբ մեծ է : Անիկա ուրիշ բանով մեծ չէ և մարդ իսկ չէ, բայց միայն Աստուծոյ ծանօթութեամբը :»

Ահաւասիկ այս սկզբունքները եղած են իմ գործունէութեանս ներքին ու խորագոյն մղիչ ոյժերը : Անշուշտ անթերի գործ մը կատարած ըլլալու յաւակնութիւնը չունիմ երբեք : Խղճատօրէն աշխատած և պարտականութիւնս կատարած եմ կրցածիս չափ լաւ, ի հեծուկս բազմապիսի դժուարութիւններու :

Մէկը կ'ըսէ, «Դասատուութիւնը ազնուագոյն կոչումն է, բայց դժնդակագոյն արհեստը : Ոչ ոք կրնայ յուսալ յաջողիլ անոր մէջ, եթէ իր բոլոր հոգին չդնէ անոր մէջ, և դրական հաճոյք մը չգտնէ : Եւ չկայ աւելի հաճոյալի կոչում մը անոնց համար որ կը սիրեն դայն» :

Յօդուածս չվերջացուցած՝ կ'ուզեմ աս առիթով քանի մը թելադրութիւններ ընել :

Պէտք է ուսուցիչը քաջալերուի «նիսապէս» ու բարոյապէս, ապա թէ ոչ՝ կ'ընկնի :

Վստահելի ուսուցիչներուն աւելի ազատութիւն տրուելու է, միջամտութիւնները կը ջլատեն դայն, և անոր աշխատութիւններուն ծաղիկը փրցնել կ'սպառնան :

Տգէտ, փառամոլ և նախանձոտ մարդիկ դըպրոցներու հոգաբարձութեան դժուարին ու փափուկ գործին ձեռնարկելու չեն : այսպիսիներ ոչ թէ հոգաբարձու, հապա հոգաբեռոց կ'ըլլան : Հոգաբարձուք գիտնական, խղճամիտ և վեհանձն անձնաւորութիւններ ըլլալու են : Ժ. Ի. Ս. Բ.

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏՈՐՄԻՂ ՄԸ ՇԻՆԵԼ

Փայտեայ նաւերու օրերուն ատեն մը կար երբ ոչ մէկ ազգ կրնար Ամերիկացիներու չափ աղէկ փայտեայ նաւեր շինել : Այս Եանքի նաւաչէններէն գրեթէ բոլորն ալ Ամերիկայի մէջ կը մնային այդ գործով զբաղելու համար : Բայց անոնցմէ մէկը առիթով մը եկած էր մինչեւ Ոսկեղջիւր, և պատերազմական նաւեր շինեց Թուրքիայի Սուլթանին համար : Այս մարդուն անունն էր Փոսթըր Բոտոս : Միայն Նահապէտ անունով նաւ մը, որ Պրուքլինի նաւարաններուն մէջ շինուած էր, այս մարդուն, այսինքն Բոտոսի և անոր ընկերոջ՝ Հէնրի Էքթըրտի՝ ձեռագործն էր :

Անոնք շահաբեր առեւտուր ընելու համար նաւարկեցին մինչեւ որ իրենց նաւն ալ լիցուն գինով ծախելու պատահութիւն մը ներկայացաւ անոնց : Վերջապէս կ. պոլիս հասան : Հազիւ հազ հասած՝ Էքթըրտ մեռաւ : Թուրք կառավարութիւնը

նաւեր շինելու համար պայմանագրութիւններ կըն-  
քել ուզեց Րոտսի հետ :

Րոտս առարկելով թէ իր նպատակը նաւ շինել  
չէր, այլ իր ունեցած նաւը ծախել, պայմանագրու-  
թիւն կնքել չուզեց : «Ես՝ իմ այս նաւիս մաս կը  
կազմեմ,» ըսաւ ան : Թուրք կառավարութիւնը  
երբ տեսաւ թէ Րոտսը իբրեւ նաւաշէն վարպետ  
գործածելու համար անոր ունեցած նաւը գնելէ  
ուրիշ միջոց չկար՝ ստիպուեցաւ անոր նաւը գնել :

Րոտս իբրեւ նաւաշէն Սուլթանին համար զսո-  
սանաւ մը և Թրքական նաւատորմիդին համար  
ալ տասը նաւեր շինեց : Ան շատ մը զուարճալի  
միջադէպներու զլխաւոր դէմքն էր, որովհետեւ  
անոր Ամերիկեան կեանքոտ ու զուարթ կերպերը  
նորութիւն էին Թուրքերու համար :

Երբ ան իր շինած նաւերէն մէկը ծով կ'իջե-  
ցընէր, Թուրք պաշտօնակալներու բազմութիւն մը  
հաւաքուած էր, որոնց մէջ էր նաեւ Սուլթանը,  
որ մետաքսէ վրանի մը տակ կը բազմէր : Րոտսի  
նաւ իջեցնելու կերպերը զարմանալի էին, ինքը  
գործաւորի մը պէս կ'աշխատէր, և անոր կերպը  
նորութիւն մըն էր Թուրքերու համար :

Թրքական սովորութիւնը այն էր որ նաւին  
երկու կողմերը հաստատուած պարաններէն քանի  
մը հարիւր մարդիկ կը բռնէին, այնպէս որ նաւը  
Վոսիորի միւս եղբրքին վրայ խրում մը չունենար՝  
ուժով հրուելուն պատճառով :

Նաւը ծով իջեցնելու գործողութեան ժամա-  
նակը զրեթէ եկած էր : Թուրքերը անհամբեր ըլ-  
լալ սկսած էին : մասնաւոր անոնք որ կը կարծէին  
թէ իրենք ալ արհեստէն հասկցող էին : Անոնցմէ  
չատերը կը մոլտային : Սուլթանին մէկ պաշտօնակալը  
Րոտսի քով եկաւ, անոր ետեւէն ալ հարիւրի չափ  
Թուրքեր կու գային զոյգ զոյգ :

«Սուլթանին ողջոյններով,» ըսաւ պաշտօնա-  
կալը և բարեւեց :

«Այս մարդիկը ինչո՞ւ եկած են,» հարցուց  
Րոտս :

«Նաւը ծով իջեցնելու օգնելու համար,» պա-  
տասխանեց պաշտօնակալը :

«Անոնց պէտք չկայ, կրնան ետ երթալ,» ա-  
ւելցուց Րոտս :

Ամերիկացի նաւաշէնը իրեն հետ ունէր եօթը  
կամ ութը մարդիկ : Նաւը ճապուկ ձեւով մը յան-  
կարծ ջուրը իջաւ : նաւակ մը զայն հոսանքն ի վեր  
քայեց և Վոսիորի ափերը ալիք իսկ չհանեցին  
զրեթէ :

Սուլթանը շատ գոհ եղաւ այս վարպետութե-  
նէն, և յաջորդ օրը Րոտսը իրեն կանչել տուաւ :  
Նաւաշէն վարպետը հազիւ շապիկ մը ու տաբատ  
մը հագած էր :

«Արքունական պալատ հրամայեց,» ըսուեցաւ  
անոր :

«Այս վիճակիս մէջ,» հարցուց Րոտս :

«Անմիջապէս,» ըսաւ Թուրքը :

Այսպէս ան առանց վերարկու մը իսկ հագնե-  
լու պարտ գնաց ու զայն Սուլթանին ներկայա-  
ցուցին : Ամերիկացին այդ վիճակին մէջ խոնարհու-  
թիւն ըրաւ Սուլթանին առջեւ : Սուլթանը բարե-  
ւեց զայն և ըսաւ թէ, եթէ Թրքահպատակ ըլլալ  
ուզէր, Թրքական նաւատորմիդին մէջ մեծ պաշ-  
տօն մը պիտի յանձնէր անոր :

«Շնորհակալ եմ, չեմ ուզեր,» ըսաւ Րոտս,  
աւելի պիտի նախընտրէի Ամերիկահպատակ մնալ :  
ատով ալ գոհ եմ :»

Րոտս Թուրքիա մնացած ինը տարիներու ըն-  
թացքին բաւական հարստութիւն դիզեց : Մեծ ու  
ճոխ տուն մը ունէր : Սուլթանը անոր սղագնի  
ցփսիներ, գորգեր և զոհարեղէններ նուիրեց, և  
Թուրքիայէ չմեկնած պատուանշան ալ ստացաւ :

Երբ Րոտս հայրենիք դարձաւ, Նախագահ Փոք  
զայն Միաց. Նահանգներու նաւատորմիդին վար-  
պետ կարգեց : Րոտս Փէնսալթայի մէջ (Փլորիտա)  
գեղին տնդէ մեռաւ, 1846ին, մինչ իր նոյն պաշ-  
տօնին մէջ էր :

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ընտրական յանձնաժողովին վերջին նիստը  
դարձեալ ապարդիւն անցաւ : Եթէ վերլուծենք այն  
պատճառները որոնք այս և նման նիստեր անբեղմ-  
նաւոր կը դարձնեն, կը տեսնենք թէ անոնք էա-  
պէս երկու են . 1) կուսակցութեանց բռնած ըն-  
թացքը կեդրոնի կամ չէզոքներու ներկայացուցիչ-  
ներուն հանդէպ, 2) Ժողովին մասնակցողներու  
կարեւոր մէկ մասին մէջ եղած անկեղծութեան  
պակասը :

Կուսակցութիւնք կը պահանջեն որ ընտրական  
պայքարը ազգին անունով մղելու գործը իրենց  
յանձնուի, քանի որ անոնք ամէն տեղ կազմակեր-  
պութիւններ ունենալով կրնան զիւրաւ համա-  
ձայնութիւններ կնքել զանազան Օսմանեան կու-  
սակցութեանց հետ և իրենց թեկնածուներուն  
ընտրութիւնը ապահովել : Բանի որ անգամ մը  
Պատրիարքարանն ալ իր չէզոքութիւնը արտայայ-  
տեց ընտրական պայքարին մէջ, Պատրիարքարանի  
բոլոր մարմիններն ալ պէտք չէ ընտրական պայ-  
քարին խառնուին : Այս պահանջները, որքան ալ  
նպաստաւոր ըլլան կուսակցութեանց շահերուն,  
չեն կրնար դժբախտաբար ամբողջ Օսմանեան Հա-  
յութիւնը գոհացնել : Մեր միջավայրը անաչառորէն  
ուսուճմասիրող ամէն անհատ չի կրնար այսօր ու-  
րանալ սա ճշմարտութիւնները թէ 1) Մեր նախկին  
յեղափոխական կուսակցութեանց այսօրուան բո-  
լոր անդամները Օսմանեան Հայութեան մեծամաս-  
նութիւնը չեն ներկայացներ, 2) կուսակցութեանց

ներկայացուցիչները անցեալ չորս տարիներու մէջ արդիւնաշատ գործունէութիւն մը չունեցան: 3) Եթէ ամբողջ ընտրական պայքարի դարձը կուսակցութեանց յանձնուի, Հայերուն քուէներուն բաժանումը անխուսափելի պիտի դառնայ, քանի որ չէզոք տարրը իր քուէները բոլորովին տարբեր անձերու պիտի տայ: 4) Եթէ ամբողջ Հայութեան քուէն բաժնուած ըլլայ, նոյն իսկ կուսակցութիւնները իրենց դաշնակցած Իրիքի հարկան կամ Իրիքի լծակն կուսակցութեանց առջեւ չպիտի կարենան իրենց խոստումը պահել ամբողջ Հայերուն քուէն կեդրոնացնելու համար: Այս ամէնուն հետեւանքն ալ այն պիտի ըլլայ, որ Հայերուն թեկնածուները նուազ քուէ պիտի ստանան և այն ատեն չպիտի կարենանք նոյն իսկ 11 երեսփոխան ունենայ Օսմանեան Խորհրդարանին մէջ: Այս տեսակէտներով ոչ միայն Հայութեան ամբողջութեան ալ նաեւ կուսակցութեանց շահն ալ կը պահանջէ որ ազգային ընդհանուր համաձայնութիւն մը գոյանայ ընտրական գործողութեան և թեկնածուներու մասին: Եթէ կուսակցութիւնք յամառին իրենց պահանջին վրայ, ազգային երկպառակութեան պատճառ տուած պիտի ըլլան, որ թէ՛ իրենց և թէ՛ ազգային ընդհանուր շահերու տեսակէտով կործատարք է: Կը լսենք թէ Իրիքի համաձայներ է Հայոց 11ի տեղ մինչև 16 երեսփոխան տալ, Նոյն իսկ ընտրական վերջին նիստին մէջ Դաշնակցութեան ներկայացուցիչներուն առաջարկուեր է այս 16 երեսփոխաններէն 6ը իրենց չարքերէն անուանել ան պայմանով որ անոնք ձիւղ և համր չըլլան, իսկ մնացեալ 10ը ընտրական ընդհանուր ժողովը որոշէ: Նոյն իսկ այս առաջարկը դեռ չէ ընդունուած: Կը ցաւինք, Չեմ գիտեր թէ այսպիսի պարագաներու մէջ յամառութիւնը կամ չափազանցեալ յանձնապատանութիւնը օգտակար կըլլան և ըլլալ:

Բանակցութիւնները անյաջողութեան մասնող պարագան ալ ընտրական ժողովի անդամներուն մէկ մասին մէջ անկեղծութեան բացակայութիւնն է: Այսօր բոլոր փաստաբանները երեսփոխանական թեկնածուներ են, բոլոր լրագրողները նոյնպէս, բոլոր քիչ շատ յայտնի պետական պաշտօնեաները, վաճառականներ եւայլն նոյնպէս կ'ուզեն բազմիչ Սպըլպազարի պալատին մէջ: Երեսփոխան ըլլալու տենչը այնքան բուռն է կարգ մը ծանօթ անձնաւորութեանց մէջ որ անոնք պատրաստ են այսօր ամէն կուսակցութեանց պահանջները ընդունելու, եթէ իրենց թեկնածութիւնը կարենան ապահովել: Այսպիսի աննկարագիր տարրերով ալ յառաջիկայ շրջանին մէջ մեծ օգուտ մը չպիտի կարենանք ապահովել Հայութեան համար: Այսօր երեսփոխանութեան համար հոգի տուո-

ղը, վաղը նախարար դառնալու կամ Ծերակոյտ մանկու համար ինչ զոհողութիւններ չընեն արդեօք: Այս պատճառով ներկայ թեկնածուներու մէջ խիստ մաքրագործում մը ընել անհրաժեշտ է:

Ժամանակը այնքան սուղ է որ ազգամիջեան ընտրական բանակցութիւնները ձգձգելը կրնայ մեղի համար աւելի վտանգաւոր ըլլալ քան ձախող որոշումի մը շուրջ ամբողջ Հայութիւնը կեդրոնացնելը: Անոր համար կը դիմենք մեր կուսակցութեանց և բանադնացներուն ազգասիրութեան, փոխադարձ զիջումներով շուտով համաձայնութեան եզր մը գտնելու համար:

Ասկից զատ ընտրական յանձնաժողովին ուշադրութեան կը յանձնենք նաեւ հետեւեալ պարագան, որ ցայժմ կ'երեւայ թէ բնաւ նկատի չէ առնուած: Ընտրական յանձնաժողովը իր թեկնածուները Պոլսէն պիտի նշանակէ և նկատի չպիտի առնէ կարգ մը գաւառական կեդրոններու մէջ գտնուող և տեղական Հայ և օտար տարրերուն վատհաւթիւնը վայելող կարող անձեր: Ասիկա շատ մեծ սխալ մը պիտի ըլլար: Հայութեան հեռաւոր գաւառներուն ցաւը ամէնէն աւելի տեղւոյն վրայ կեանք մաշող այս անձերը շատ աւելի մօտէն գիտեն քան Պոլսոյ մէջ ապրող փաստաբան մը, որ միայն Պատրիարքարան եկած թուղթերէն պիտի քննէ խնդիրը և միջավայրի և կացութեան կատարեալ դիտակցութիւնը չպիտի ունենայ: Ասոր համար մասնաւորաբար պիտի յանձնարարէինք մեր ընտրական յանձնաժողովին որ այս պարագան ուշադրութեան առնէ:

Գալով այն հարցին թէ մենք Օսմանեան թէ Հայ երեսփոխան պէտք է զրկենք, այս այնքան պարզ է որ պէտք չկայ ատոր վրայ ծանրանալու: Մենք կ'ուզենք Հայ Օսմանցիներ: Ազգութիւնը չապիկ մը չէ որ մարդ ուզածին պէս կարենայ փոխել: Իր ազգին պահանջներուն գոհացում տալու փափաքը այնքան բնական է որ կարելի չէ զայն ճնշել, եթէ բռնապետութիւն չենք ուզեր հաստատել: Միւս կողմէն ալ մեր պահանջները այնքան օրինաւոր են և այնքան սերտիւ կապուած ընդհանուր կայսրութեան շահերուն որ անոնց իրագործումը կայսրութեան կենսական շահերուն պաշտպանութեան հետ գրեթէ նոյնացած է: Կը մտղմենք որ Ընտրական Յանձնաժողովին անդամները և կուսակցութիւնք բանակցութիւններով չսպաննեն թանկագին ժամանակը, որուն վտանգը ակնյայտնի է, և իրենց վրայէ թօթուելով Ասիական դանդաղութեան արտասնիշերը քիչ մը աւելի եռանդ և բարեացակամութիւն ցուցնեն արժանաւորագոյնները իբր ազգին ներկայացուցիչները հրաւիրելու խորհրդարան:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## ԱՐՏԱՔԻՆ

**Պարսկաստան.** Փետրուարից կը ծանուցուի թէ Դաւրէժէ մեկնող Ռուս նանաձիգները իրենց զինուորական ծառայութիւնը աւարտած զինուորներ էին և թէ ուրիշներ պիտի յաջորդեն անոնց : Հետեւապէս Ռուսական արշաւախումբին թիւը անփոփոխ կը մնայ : Աստրապատի Ռուս հիւպատոսը տեղեկագրեց թէ Մազանտարա նահանգին մէջ անիշխանութիւն կը տիրէ և թէ Ռուսերու կեանքը վտանգի մէջ է : Անմիջապէս 2 գումարտակ զօրք զրկուեցաւ Աստրապատ, 1 Պարֆուշ, 1 ալ Մէճտէսէր : Անգղ. և Ռուս զեռպանները Պարսից Արտաքին գործերու նախարարին զեկուցին թէ Աստրապատի Ռուս հիւպատոսին ձեռամբ պիտի զեկուցուի նախորդ Շահին թէ Պարսկաստան տրամադիր է 50,000 թուման թոշակ տալ անոր և ներում չնորհել իր կուսակիցներուն, եթէ ամէն ալ անմիջապէս մեկնին երկրէն : Իսկ փոխատուութեան բանակցութիւնները գրեթէ աւարտած են : Գումարը պիտի ըլլայ 50 միլիոն ֆրանք, իսկ պայմանները (1) ֆէտայիներու բնաջնջում, (2) խազախ շոկաններու և ոստիկան զինուորներու յաւելում, (3) խորհրդարանի բացման յետաձգում, և (4) Ծերակոյտի նմանող ժողովի մը հաստատում : Գահընկէց Շահին եղբայր Սալար էտ Տէօվէ Բիրման շահի կողմը կառավարական զօրքերէն յաղթուած և Գուրդերէն լքուելով փախած է :

**Ձիւ.** Երեքշաբթի երեք հրովարտակ հրատարակուեցաւ : Միով կը ծանուցուի թէ արքունիքը կ'ընդունի հանրապետութեան հաստատումը, երկրորդով թէ կ'ընդունուին Եուանչիքայի և հանրապետականներուն պայմանները, երրորդով ալ թէ արքունիքը ժողովրդին փափաքով կը քաշուի քաղաքական իշխանութենէն : Ամբողջ երկիրը ուրախութեան մէջ է : Յեղափոխականները գրաւեցին Բայիին քաղաքը : — Զօր. Թաթիէնվայ օտար հիւպատոսներուն զեկուցած է թէ Մանչուրիոյ հանրապետական կառավարիչ կարգուած է :

**Մանչուրիա.** Նիքիթա թաղաւորը անցեալ հինգշաբթի Պերլինէ մեկնեցաւ դէպի Փետրուարիկ, ուր շաբաթ ժամանեց իր որդւոյն հետ և Զարաթօէ Սէլօի կայարանին մէջ ընդունուեցաւ Զարէն և մեծ դուքս Բիրիլիոսէի, Երկու վեհապետները սիրով ողջագուրեցին զիրար և գացին ուղղակի Աղեքսանդրի պալատը, ուր Վեհ. հիւրը այցելութիւն

տուաւ Զարուհիին և յետոյ մայր կայսրուհիին : Ն. Վեհափառութիւնը Պերլինի մէջ խմբագրի մը յայտարարեց թէ իր երկիրը սիրալիր յարաբերութեան մէջ է Թուրքիոյ հետ, և հրացմամբ խօսեցաւ անոր քաջարի և հայրենասէր բանակին վրայ :

**Պարսկաստան.** Իտալական Սթէֆանի գործակալութիւնը բացարձակապէս կը հերքէ Պոլսէ տրուած սալուրերը թէ Յունվ. 23էն 27 կուրներ տեղի ունեցած են ի Պէնդազի : Զօր. Քանէվա որ անցեալ շաբթու Հոոմ վերադարձաւ ուրէ փոփոխում չընդունեցաւ իր ռազմավարական յատակագիծին մէջ, որ է գործողութիւնները յամր բայց առանկով կերպով յառաջ տանիլ : Զօրավարը այս շաբթու Տրիպոլիս մեկնեցաւ : Պատերազմական նախարարութիւնը ձեռնարկած է պատրաստել Տրիպոլիսէն մնայուն բանակ մը, 13,000նոց երեք զօրաբաժինէ բաղկացեալ, որու գործը պիտի սկսի խաղաղութեան կնքումէն ետեւ : Ափրիկեան արշաւախումբը զարդիս կը բաղկանայ, կ'ըսուի, 140,000 զինուորէ, մինչ Հոկ.ին կը բաղկանար 50,000է միայն : Իտալական շոգենաւ մը երկուշաբթի ստիպուեցաւ Մալթայի Անգղ. իշխանութիւններուն յանձնել երեք ամիսէ ի վեր բանտարկեալ 3 Արաբ ոստիկաններ, զորոնք շրթայակապ Իտալիա կը տանէր, Մարդիկը հոն պիտի պահուին մինչև որ անոնց դատապարտութեան վճիռը ցուցուի պաշտօնապէս : Նոյ. 26ի ճակատամարտին մէջ Իտալացիներ յօշոտողներուն պարագլուխը մահուան դատապարտուեցաւ : Էրիթրէի Իտալական զաղութէն ընդհանրապէս հասան Տրիպոլիս, որ պիտի կրնան մեծ ծառայութիւն մատուցանել : Յառաջիկայ հինգշաբթի պիտի բացուի Իտալիոյ Խորհրդարանը, որու օրակարգն անցած է նաեւ Նոյ. 5ի հրամանագիրը, որ կցուած կը հռչակէ Տրիպոլիսն ու Պէնդազին :

**Հեռագրաւորք.** Ֆրանսայի Ծերակոյտը 48ի դէմ 222 քուէով վաւերացուց Մարտեան Ֆրանքեգերման համաձայնութիւնը : Այդ առիթով Վարչապետը յայտարարեց թէ դաշնագիրը ուրէ փոփոխում չպարտադրեր Ֆրանսական քաղաքականութեան համար և թէ երկիրը խորապէս խաղաղասէր է և խաղաղութեան միակ գրաւական կը համարի զինուորական, ծովային և ելեւմտական իր ոյժերուն պահպանումը : Հոտէյտայի Ֆրանսական հիւպատոսը հաստատեց թէ Ճէսպանայի Իտալական որմբակոծումը բնաւ չվնասեց Նախի երկաթուղին շինող Ֆրանսական ընկերութեան : — Անգղիոյ Պատերազմական նախարար Լորտ Հոլաէյն անցեալ հինգշաբթի Պերլին ժամանեց և կիրակի մեկնեցաւ :

2

Լորտը հացկերոյթներով մեծարուեցաւ Գերմանիոյ Կայս. ամուլէն և Վարչապետէն ու տեսակցութիւններ ունեցաւ նախարարներու և բարձրաստիճան պաշտօնատարներու հետ : Այս այցելութիւնը բնականաբար մեծ ուշադրութիւն գրաւեց քաղաքական շրջանակներու : Եջ : Ուստի նախարարը քանի մը անգամ փութաց յայտարարել թէ իր շարժառիթը զուտ անհատական է : Իսկ Արտաքին գործերու նախարարութիւնը զեկոյց թէ անոր նպատակն է Գերման համալսարաններու կրթութեան վրայ գաղափար ստանալ, բայց եթէ այս առիթով քաղաքական ռեւէ կարեւոր խօսակցութիւն ունենայ, Ռուսիոյ և Ֆրանսայի տեղեկութիւն պիտի տրուի պաշտօնագէտ : Անգղիոյ Մովային նախարարը անցեալ ուրբաթ, ճառի մը մէջ ըսաւ թէ նաւատորմը Անգղիոյ համար անհրաժեշտ պէտք, իսկ Գերմանիոյ համար պերճանք է : — Անցեալ շաբթու Րայխսմալը բացուեցաւ գահաճառով մը, որ կը յայտարարէ թէ ամէն տէրութեան հետ բարեկամական յարաբերութիւն կը մշակուի փոխադարձ յարգանքի և բարեացակամութեան հիման վրայ : — Յունաստանի Խորհրդարանը շաբաթ լուծուեցաւ : Նոր ընտրութիւնները պիտի կատարուին Մարտ 24ին և Խորհրդարանը պիտի գումարի Մայիս 4ին : Չորեքշաբթի ալ Սերպիոյ Աքուփչինան լուծուեցաւ և նոր ընտրութիւն հրամայուեցաւ : — Ռուս Կայսրութեան Խորհուրդն ընդունեցաւ Տումայի այն օրէնքը, որով Ֆինլանտայի Ռուսահպատակները Ֆինլանտացիներու հաւասար իրաւունքներ կ'ստանան : — Պուլկարիոյ Վարչապետը անցեալ շաբթու Սոպրանիչի մէջ հարցապնդման մը պատասխանելով հաստատեց ինը Պուլկարներու սպանումը Իւսկիւպի մէկ վանքին մէջ : Բայց յարեց թէ ոճրագործները ձերբակալուած են և պիտի պատժուին : Ուրիշ հարցումի մը եւս պատասխանեց թէ կարելի չէր աւելի յապաղել նախորդ Օսմ. զեպանին պատուանշան մը տալու գործը : — Անցեալ շաբթու Սպանիոյ Թագաւորը և Թագուհին Ֆէրոյ գացին Էսթանիս զրահաւորին ծով իջուցման ներկայ գտնուելու համար : Սազէպօէ (Ճափոն) ալ ծով իջուցուեցաւ ծփու չոր աւաղան մը, ուր մինչեւ 30,000 տակառաչափ տարողութեամբ զրահաւորներ պիտի կրնան նորոգուիլ : — Պելճիոյ մէջ 30,000 հանքագործներ չորս շաբաթէ ի վեր գործադուլ հրատարակած են և 70,000 անձեր չքաւորութեան մատնուած : Գործադուլին պատճառն է, կ'ըսուի, ութօրեայի տեղ ԱՅօրեայ վճարումի գրութեան հաստատումը նոր օրէնքի մը համաձայն : — Անցեալ

արթու Սպանիոյ և Փորթուկալի գետերը յորդեցին և կեանքի և ինչքի մեծ վնաս պատճառեցին քաղաքներու թէ գիւղերու մէջ : Փորթուկալի Խորհրդարանը կէս միլիոն ֆրանք քուէարկեց ի նպաստողողեալներու : — Էրէնթալի կոմսին վիճակը բնաւ գոհացուցիչ չէ : Կաթուղի ազատամտութեան պերճախօս ախոյեան Հայր Իսաէնթ Լուազոն, որ Պուլին անսխալութեան դէմ պայքարեցաւ ու բանադրուեցաւ և իբրեւ արդիականութեան սիւներէն մին մեծ հռչակ շահեցաւ, անցեալ ուրբաթ մեռաւ 85 տարեկան : Նմանապէս խոր ձերութեան մէջ մեռաւ հակառակական գրութեան հնարիչ հռչակաւոր վիրարոյժ Լորտ Լիսթըր, որ 1827ին ծնած էր :

Ն Ե Ր Ք Ի Ն

Մայրօրհայր. Երեսփոխանական ընտրութիւններու համար լուրջ պատրաստութիւններ սկսան : Տասնանդամ քննիչ յանձնաժողով մը կազմուեցաւ, որու մէջ կար մէկ Հայ և մէկ Հրեայ : Յետոյ ուրիշ 13 անդամներ ալ ընդունուեցան, մին Հայ, մին Յոյն և մին Հրեայ : Այս յանձնաժողովը որոշեց որ մինչեւ ութ օրէն իւրաքանչիւր թաղապետութիւն պատրաստէ իր շրջանակի ընտրողներուն ամբողջ ցուցակը : Երկու մեծ կուսակցութիւնները յայտագիրներ հրատարակեցին զիրար քննադատող և ժողովրդային տրիբուններ ձեռնարկած են հրապարակախօսութիւններով նոյն կուսակցութիւններուն արժանիքները և խոստումները ի վեր հանել : — Րումէլիի բարենորոգումներու յանձնաժողովը այսօր կը մեկնի Ներքին գործերու նախարարին նախագահութեամբ : Առաջին բարենորոգումը պիտի ըլլայ ոստիկան զինուորութեան մէջ : Ուստի ձեռնհաս բարձրաստիճան սպաներ կ'ընկերանան նոյն մարմինին : Իսկ Անատոլի բարենորոգումներու յանձնաժողովը պիտի մեկնի Մարտի վերջերս : Վանայ, Պիթլիսի և Կարնոյ կուսակալներուն ընդարձակ իրաւասութիւն տրուեցաւ յոռի պաշտօնեաներ պաշտօնանկ ընելու և անոնց տեղ լաւագոյններ կարգելու : Որոշուեցաւ մայրաքաղաքիս պաշարման վիճակը վերցնել, նախ սակայն քանի մը կարեւոր օրէնքներ պատրաստելով և Կայս. վաւերացման ենթարկելէ ետեւ կիրառելով : Այդ կարգէն պիտի ըլլան մամուլի, հանրային գումարման և գործադուլի օրէնքներու ինչ ինչ բարեփոխումներ : — Իզմիրի նախորդ կառավարիչ ճէմալ պէյ արձակուեցաւ ապացուցանելով թէ ինք Պէրսիէի պարզ տնօրէնն էր և ոչ պա-

տասխանատունս — Պուրկարական դեսպանը համակով մը Ֆէրտինանտ թագաւորին, Պորիա իշխանին և արքայական տան շնորհակալութիւններն յայտնեց Յունաց Պատրիարքին և Պատրիարքարանի ժողովներուն՝ իրենց շնորհաւորութիւններուն համար, Թայֆի Պալքանեան թղթակիցը նոյն Պատրիարքին հետ երկար տեսակցութիւն մը ունեցաւ Յոյներու և Պուրկարներու միջեւ մերձեցում յառաջ բերելու համար։ — Նախկին Վարչապետ Հազըր փաշա չորեքշաբթի Եւրոպա ուղեւորեցաւ արեւելեան ձեպընթացով։ — Էրէյիի հանքային ընկերութեան և Օսմ. կառավարութեան միջեւ եղած անհամաձայնութեան բարձման համար պատուիրակ մը եկաւ և կը բանակցի նախարարական յանձնաժողովի մը հետ։

Նահանգներ. Երեքշաբթի Մանասթըրի Սթավրոզ գաւառակին մէջ բազմաթիւ ծինելոյցներ, պատեր ու տուներ միասուեցան երկրաշարժի զօրաւոր ցնցումներէ և ժողովուրդը շէնքերէն դուրս թափեցաւ ահուգողով։ Իշխանութիւնները վրաններ փութացուցին՝ բնակչութիւնն ի հարկին պատասպարելու համար։ Ռումէլիի մօտ ապագային վրայ մեծ յոռետեսութիւն կը յայտնուի օտարներու կողմէ։ Յոյն և Պուրկար հրոսախմբեր մեծ դործուհեութեան մէջ են և երբեմն զինուորներու հետ կ'ընդհարին։ Սէլանիկէ կը զրուի Թայֆի թէ Հարաւային Ալպանիոյ Վալոնա և Էրկիրի դիւղերը կը մերժեն տուրք վճարել։ Գոմանովայի և Թապանովայի միջեւ երկաթուղիի գծին վրայ դարձեալ ուժանակաւոր ուժ մը գտնուեցաւ ելեկտրական մարտկոցով։ Նաեւ մէկերկու նոր հրոս ձերբակալուեցան մեռած վիճակի մէջ։ Ազատականներու ներկայացուցիչ Մուսթաֆա Նուրի էֆ., որ Սէրէզ գացած էր ակումբ մը բանալ և իր կուսակցութիւնը ծանօթացնել, չարաչար բրածեծ եղաւ և մինչեւ իսկ ըսուեցաւ թէ ձեռին հետեւանքներէն մեռաւ, ինչ որ սակայն յետոյ հերքուեցաւ։ — Արիւնալի կոիւներ կը ծանուցուին Լիբանանի երկու գիւղերէ, Սիւրիական Տրիպոլիտէ և Հալէպէ, և աւաղակութիւններ Պասրայէ։ — Կրեւաի պաշտպան աէրութիւնները մերժեցին կղզիին յեղափոխական կառավարութիւնը ճանչնալու Ռուսական առաջարկը և որոշեցին արդի կացութիւնը չփոփոխել։ — Նիսալի պէյ, որ Տրիպոլիս երթալու պահուն արգելուեցաւ Երիպտական իշխանութիւններէն, մայրաքաղաքս ժամանեց։ — Մանասթըրի ընդհ. դատախազ Հաչիմ պէյի սպանիչներուն զորդիչները Սէլանիկ փոխադրուեցան դատուելու համար։ — Պալտասի գծին Ատանա-Հալէպի ճիւղին

(150 հզմթ.) աշխատութիւնները վերջացած են։ Սամսոն-Սըվազի գծին աշխատութիւնները փութով յառաջ կը տարուին։ — Երուսաղէմի մէջ Հրէական մեծ վարժարանի մը համար 80,000 ոսկի նուիրուած է զանազան անձերէ։ — Աղեքսանդրիոյ Սըպաիներու նախկին Պատրիարք Տ. Քիրիլիոս տեղւոյն Յոյն Պատրիարքին դիմած է Օրթոտոքսութիւն ընդունելու համար իր ժողովրդով։

Աւեփ. Ժող. Գատական նախարարութիւնը պատճառաբար մը կը յիշեցնէ Ազգապետարանի թէ հանրային և մասնաւոր վարժարաններու անօրէններ, արհեստանոցներու պետեր ու վարիչներ, ամէն կարգի արհեստագետներ, պանդոկապաններ և սենեկապաններ, երբ չպատուասուած կամ պատուաստի վկայական չունեցող անձեր կ'ընդունին իրենց հաստատութիւններուն մէջ, ըստ օրինի տուգանքի կ'ենթարկուին։ Ուստի առողջապահական խորհրդոյ յանձնարարութեամբ Քաղաքապետութիւնը՝ որոնց որ հարկ է՝ պատուիրած է յարգել օրէնքը։ Ըստ այսմ հոգեւոր պետերու ալ կը ծանուցուի հարկ եղածը հաղորդել իրենց իրաւասութեան տակ գտնուող հաստատութիւններուն։ — Զանախրաց Քրիստոնեայ Ընկերակցութիւններու հիմնադիր և նախագահ Տր. Քլարք շաբաթ իր տիկնոջ հետ մայրաքաղաքս հասաւ Եւրոպայէ, և կիրակի Պայպըլ Հաուսի մատրան մէջ երկու անգամ խօսեցաւ թարգմանով ու աշխարհի բազմազան կողմերէն սիրալիւր ուղղոյններ հաղորդելէ զատ շահեկան տեղեկութիւններ տուաւ Քրիստոնեայ Զանախրներու դործին և յառաջդիմութեան վրայ։ Երկուշաբթի մեկնեցաւ դէպի Գոնեա և պիտի այցելէ կարգաւ այն տեղերը ուր Պողոս առաքեալ պտըտեցաւ ու դործեց։ Գիտաւորութիւնն է ի մօտոյ գիրք մը հրատարակել նոյն առաքեալին ուղեւորութիւններուն վրայ։ — Անցեալ հինգշաբթի գիշեր Սյնալը Չէչմէի Սը. Երրորդութիւն եկեղեցիին դպրոցայարկին մէջ եզանակիս երկրորդ ատենախօսութիւնը տեղի ունեցաւ։ Նիսին էր յնածութիւն (իլինոթիզմ), որու վրայ շահեկան ճառ մը խօսեցաւ Տր. Պեննէ Թորոսեան ի նպաստ օրիորդներու Օժանդակ ընկերութեան։ Առաջին ատենախօսութիւնը տեղի ունեցած էր քանի մը շաբաթ առաջ, երբ Ամերիկեան դեսպանատան իրաւագէտ խորհրդական Շմաւոնեան էֆ. հոծ ու հմտալից ծանօթութիւններ հաղորդեց քափիթիւլախիոններու վրայ, խօսելով ի նպաստ Երիա, ընկերակցութեան։ Կիրակի Վեր. հովիւր նոյն եկեղեցիին մէջ խօսեցաւ ծանուցուած նիւթին վրայ շատ շահագրգռական ոճով։ Գժախտաբար փա-

փառութիւն չափ բազմաթիւ չէին ունկնդիրները: — Կեսարիոյ միտինար Մր. Ֆաուլի որդին Մր. Չարլս մայրաքաղաքիս Ամերիկեան դեսպանատան առջին թարգման կարգուեցաւ:

Հայ ժող. Անցեալ հինգշաբթի Պատրիարք Հայրը Դատական պաշտօնատուն հրաւիրուելով լիովին բացատրութիւն տուաւ թի ինչո՞ւ խիստ լեզուով զրած էր իր բողոքը Փանկալթիի գերեզմանատան խնդրին նկատմամբ: Նախարարը խոստացաւ այդ բացատրութիւնը նախարարներու խորհրդին ներկայացնելու: Երկուշաբթի նոր պաշտօնադրով մը յիշեցուց թէ միայն երկու օր կը մնայ պայմանաժամուն լրման, և թէ հարկաւ գերեզմանատան պատին քանդման առարկութիւն պիտի չըլլայ, քանի որ քաղաքին բարեկարգութեան պիտի ծառայէ այն Ապառիպոսցոց նաեւ թէ որոշուած է գնահատուած արժէքին համապատասխան հատուցում ընել: Ուստի հարկ է կարեւորն ընել և հաւանութիւն տալ մինչեւ պայմանաժամին լրումը: Անմիջապէս Պատրիարք Հայրը գրաւորապէս պատահանեց թէ խնդրը էջմիածնի Կաթողիկոսութեան պարզուած է և պատասխանի կ'սպասուի, միեւնոյն ժամանակ նոր մարմին մը պիտի կազմուի, որու հետ կառավարութիւնը կրնայ համաձայնիլ: քանի որ որոշած է արժանաւոր հատուցում մը ընել գետնին համար: Իսկ գալով Քաղաքպետութեան ինքնազուլիս գործելուն որ մէկ կողմէ գերեզմանատան կից խանութպաններն հրաւիրած է փութով պարպել խանութները, եթէ ոչ՝ յետոյ պիտի չլսուին ոեւէ արտունջներ և վնասի հատուցման խնդիրներ, և միւս կողմէ Բեքայի Թաղ. Խորհուրդը և կառուածներու Հոգաբարձութիւնները հրաւիրած է հաւանիլ խնդրոյ առարկայ պատին քանդման, ցաւ յայտնեց որ օրինական ճամբաներ կ'անտեսէ և չճամբերը որ Պետական Խորհուրդը իր որոշումը տայ: Սոյն կէտերը պարզեց նաեւ Ներքին գործերու նախարար Հաճի Ատիլ պէյի, որ նոյն օր փոխադարձ այցելութեան եկած էր Պատրիարքարան, և Ն. Վսեմութիւնը խոստացաւ կարելին ընել նախարարներու խորհրդին մէջ: Հետեւեալ օր Խառն Ժողովը արաստովոր նստի հրաւիրուեցաւ, և լսելէ ետեւ այս իրադարձութիւնները որոշեց որ Պատրիարքարանի կողմէ Տիրան էֆ. Երկանեան և Միրան էֆ. Մուրատեան հինգշաբթի Դատական նախարարին ներկայանան, և մինչեւ որ բանակցութիւնը նպատաւոր ելքի մը չյանգի, ոսկերտի փոխադրութեան չձեռնարկուի: Իսկ եթէ Քաղաքպետութիւնը բռնի քանդէ պատը, ազգը իր իրաւունքին վրայ պնդէ օրինական միջոցներով: — Ուրբաթ Պատրիարք Հայրը շնորհակալութեան այցելութիւն ընդունեցաւ Պուլկարիոյ դեսպանէն, զոր շնորհաւորած էր Պորթա իշխանին չափազանց ըլլալուն առիթով: Ազգ Ժողովը նոյն օր միաձայնութեամբ որոշեց ցաւակցութիւն յայտնել Մ. Փիէռ Քիլեառի այրին և երկար վիճարանութեան մը ետեւ թուէարկեց բանաձեւ մը, որով կատարեալ հա-

ւանութիւն կը արուի երեսփոխանական ընտրութիւններու վերաբերեալ վարչական անօրինութիւններուն և կը հրաւիրուի վարչութիւնը իր վերին հասկողութիւնը շարունակել: — Մշոյ Թիլ զիւղին մօտակայ վանքին թանկագին հնութիւնները, որ Քուրդերու կողմէ գրաւուած էին, թագրերով մը պահանջուեցան կառավարութեանէ: Գերիզիի (Ատապազար) ազգապատկան 200 արտավար մշակելի գետին մը տեղային իշխանութիւնը փորձած է չընչին գնով մը գրաւել: Խնդրին ուսումնասիրութիւնը փաստարանի մը յանձնուեցաւ Պատրիարքարանի կողմէ: Ղեւնդ Վրդ.ի կողմէ ազգին փոխանցելի Երուսաղէմապատկան ստացուածներու կառուածագրերը որոշուեցաւ Երուսաղէմէ մայրաքաղաքս բերել, որպէս զի հոս կատարուի փոխանցման գործողութիւնը: — Յունաց Պատրիարքը Սիւնոզին որոշմամբ Իզմիրի առաջնորդին սիրալիլ կոնդակ մը զրկելով խորապէս գնահատեց տեղոյն մետրապոլիտին հետ մշակուած անկեղծ յարաբերութիւնները: — Երկուշաբթի Տր. Թէրզեանի կողմէ Իւնիոնի դէմ բացուած դատին մէջ Ֆրանսացի նոր փաստաբանը մերժեց դատախազին պահանջումը սա սկզբունքով թէ կորուստը ժողովրդային խոսվութեան հետեւանք էր, և թէ Ֆրանսական դատարաններ նմանօրինակ պարագաներու մէջ մերժած են արդէն այդպիսի պահանջումներ: Դատախազին պաշտպանը սակայն պնդեց թէ խոսվութեան դադրելէն ետքը ազգի 4/17ին այրած է իր պաշտպանակալին տունը լամբարի մը շրջումէն, զոր կարող է ամենայնիւ ապացուցանել: Ուստի որոշուեցաւ չորեքշաբթի յետաձգել դատը: Այդ օր ալ Ֆրանսացի ուրիշ փաստաբան մը հակասութիւն գտաւ դատախազին աղերսագրին ու նոր փաստաթուղթերուն միջեւ: Եւ որոշուեցաւ Ատանայի մէջ ընդունութիւն բանալ և նայիլ թէ իրօք յիշուած թուականին այրած է չէ՞քը: — Յով. էֆ. Պրէնքեան (Օրթաքէօյ) գրաւորապէս խոստացաւ իր 7—8 հարիւր հատոր գիրքերը Ազգ. մատենադարանին նուիրել: — Մերակուտական Գարբիէլ էֆ. Նորատունկեան եգիպտոս ուղեւորեցաւ իր դատեր հետ: — Ա. Մանթաշոֆի ժառանգորդները 10.000 բուպլ նուիրած են Կովկասի Հրատարակչականին, 1.000ական ալ ուսուցչական միութեան և Լոյս ընկերութեան: — Թղթատարական և հեռագրական նախարարութեան նախկին նախարար Յակոբ էֆ. Սթամպոլլեան չորեքշաբթի յանկարծամահ եղաւ իր տան մէջ իւր 30 տարեկան: Այս տխուր մահուամբ կ'անհետանայ շատ կարող, արդիւնաւոր և խոստմնալից անձնաւորութիւն մը, որ ազգին պարծանքներէն էր:

اوه دار هفته لوق غزته — درسعادته بايل هاوسده — مدير مسئول — صمويل ق. هاروتيويان

ՊԱՅՄԱՆՆԵՐ	
Տարեկ. բանկերէն	40 ԴՃ.
Ամերիկայի հոբ	2 ՏՈԼ.
Անգղիոյ	3 ՆԻՒՆ
Ուրբէն կերպերու	10 ՅԲ.
Ձեռքէ հասը	40 ԺԻՐ.
Մանուցման գիները չփակոց	

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

Խմբագիր Հ. Ս. Պարնըմ

Պատշաճ Հասցե  
Կ. պոլիս, Թուրքիա

THE AVEDAPER

AN ARMENIAN WEEKLY

EDITOR H. S. BARNUM

American Bible House  
Cons/ple, Turkey

TERMS	
An. Subscrip.	Ps. 40
U. S. A.	\$ 2
England	Shils. 8
Other countries	Fra. 10
Single Copy 40 Paras	
Advertising rates on application	

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ Ի ՊՐՈԽԱ

Եայլա Պատ. Մ. Օտապաչեան 54, Լոզ Անճէլէս Տիկ. Շ. Մարգարեանի ձեռքը 533 սա'պէս — Օրց. 7 տողար, Տիրաբք Գ. Միքայէլեան 2, Մ. Ա. Թէնեան 1.50 Տիկ. Զ. Մարգարեան 2, Ա. Եկաւեան 1, Յ. Փաշիկեան 1, Ե. Եսայեան 50 սէնթ, Օ. Պէրպէրեան 50 ս., Գ. Թաչեան 25, Գ. Թարխանեան 25, Ե. Գոսպարեան 25, Ա. Աւագեան 25, Ա. Խաչատուրեան 50, Գ. Երուանդեան 50, Յ. Գուրուեան 50, Ա. Ճուրոյեան 50, Յ. Առաքելեան 50, Տ. Էօմիւրեան 50, Յրէզնօ Յրութ Բըմբէնի 50, Պ. Բիրէմիթեան 50, Գորգավաճառ Մինասեան 50, Տիկ. Աննա Թորոսեան 50, Տիկ. Ազապի Փօթիկեան 25. Գուճար 22 տոլ. 25 սնթ. Թոտոսթոյ Մ. Հ. Գուզուքէպապեանի ձեռքը 90, սա'պէս Տիկ. Մ. Հ. Գուզուքէպապեան 8, Օր. Ուզունեան 8, Տիրաբք Յ. Փօթաճեան 9, Թ. Տէր Սահակեան 15, Ն. Թարազճեան 5, Թ. Պէրրճեան 5, Ե. Պաթիկեան 6, Մ. Մէնթէրեան 5, Պ. Մալխասեան 10, Ա. Վրթանէսեան 9 և Բէրէսթէճեան Եղբք. 11.20, Պատ. Ա. Մուճմիտիս 10 քաշ կաթ կաղանդի աթիւ, Օրց. 15, Բ. Աճէմեան էֆ. 52, վաճառուճէ 14: Գարս Յ. Գօլանճեան և Մ. Թաչվէրանեանց էֆք. 1.000 գործածուած փուլ, Ենիճէ Գ. Պէնաէլեան էֆ 40. Կ. Պոլիս Տիկ. Ո. Չարդեան 20, Պուրտուր Վեր. Փ. Փապիտիսի ձեռքը 80.10, սա'պէս Տիրաբք Ե. Ելզաեան 10, Հ. Յարութիւնեան 5, Յ. Տօնէլեան 5, Մ. Սահակեան 5, Գ. Ոսկանեան 6, Ս. Պարասկէվաիտիս 5, Ս. Յովհաննէսեան 4, Ա. Թանասեան 10, Տիկ Գաթինա Փապիտիս 10, Օր. Վ. Էճգաճեան 2.20, Տիկ. Անէթա Թօմաիտիս 6.10 և զարօցի փորթիկներ 11.20, այս վերջիններն սա'պէս — Ե. Թօմաիտիս 4.5 փր. Գ. Արթինեան 10 փր., Գ. Կարապետեան 40 փր., Թէօտօրա Թօմաիտէս 40 փր., Մարիքա Թօմաիտէս 25 փր., Ս. Հաճարճուճեան 20 փր., Աննա Արթին-

եան 30 փր., Թէլմա Թօմաիտէս 45 փր., Ո. Ոսկանեան 40 փր., Գ. Թօմաիտէս 30 փր., Վ. Ոսկանեան 10 փր. և Ն. Անասթասիատէս 10 փարա, Կ. պոլիս Մ. Գալիպաղեան էֆ. 108: Վէզիրբէճօփի Սըմարեան Եղբք. 108 և օրց. 74: Ատապազար Օր. Պ. Նօտուլեանի ձեռքը ՎԵղուլաց Պարս Օրիորդաց Ընկ. 108 և օրց. 40: Երկու որբուհեաց համար վճարուճ Գատըքէօյէ 648: Ատապազար Յ. Ալիքսանեան էֆ. օրց. 68: Գ. Մկրտիչեան էֆ. 54, Տր. Ատամանտիտիս 47, Տիկ. Ն. Թօզապիլեան կաղանդի շաքարեղէն, մեր կօշկակարը 10: Պարտիզակ Տր. Տէր Ստեփանեան 54, Տիկ. Ռ. Արապեան 54, Յ. Բիւրքճեան էֆ. 40, Օր. Ա. Վարժապետեան 10, Տր. և Միսիս Չէյլոյս 54: Եգիպտոս Տիրաբք Զ. Չալըգեանի ձեռքը օրց. 141, Մր. և Միսիս Մէքնօթըն, կաղանդի պատկերներ: Սէլանիկ Մ. Տէրվիչեան էֆ. 108. Դըրշէհիւր Մ. Սաստէթեան էֆ. 3, Ենիճէ Տիկ. Ե. Չիլինկիրեան 20, Յ. Չիլինկիրեան էֆ. օրց. 20: Պուրտուր Գ. Ոսկանեան էֆ. օրց. 75, սա'պէս Տիրաբք Ե. Այվաղեան 5, Լէոն 5, Յէհմի էֆ. Վէլիլը դօմանտանըն 5, Գ. Արիստակեսեան 12, Մ. Գարակէօզեան 5, Գ. Մոլսէսեան 3.20, Գ. Կարապետեան 3.30, Մ. Գարակէօզեան 5, Հաճի Յակոբ 3.20, Մ. Թանմիզեան 4, Մ. Ալիքսանեան 3, Գ. Թիւֆէնկճեան 5, Վահան 3.20, Յ. Թիւֆէնկճեան 5, Զ. Յակոբեան 4 և Գ. Ոսկանեան 3.20, Օր. Չապէլ Ս. Տիւրկէրեան 20: (Շարունակելի)

Հոգեւոր պաշտամունք՝ վաղը, ժամը 3ին (Ը. Ե.) կոստիկեան բնակարանի մէջ, Պօյաճըզիւղ:  
Կ. Պոլսոյ Ե. Բ. Ընկերակցութեան Աղօթքի Ժողով, ժամ 3.45ին (Ը. Ե.), Գուճգափու, Միլիճ Հաուսի մէջ: